ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԵԴԻԱ ՈԼՈՐՏԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ինֆորմացիայի ազատության կենտրոն

2021

Բովանդակություն

Ներածություն..... 3

Ուսումնասիրության նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը..... 5

Ամփոփ 9

Ա. Հայաստանյան մեդիա միջավայրում ազդեցություն ունեցողները 13

Բ. Հայաստանյան մեդիա դաշտում շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագիրը, առկա խնդիրները..... 20

Գ. Հայաստանյան մեդիայի փորձն ապատեղեկատվության դեմ պայքարում. ինչպես են ԶԼՄ-ները նվազեցնում կամ չեզոքացնում կեղծ լուրերը 26

Դ. Ապատեղեկատվության դեմ պայքարի իրավական կարգավորումներն ու լծակները 32

Ե. Եզրահանգումներ 37

Զ. Առաջարկություններ և խորհրդատվականներ 40

Ներածություն

Նախորդ մեկ և կես տարվա ընթացքում (2020թ. մարտից մինչև 2021թ. հոկտեմբեր), պայմանավորված նոր տեսակի կորոնավիրուսային համավարակով, վերջինիս տարածման պատճառով Հայաստանում հայտարարված արտակարգ դրությամբ[1], որն ուղեկցվել է նաև տեղական լրատվամիջոցների որոշ հրապարակումների՝ նախկինում նախադեպը չունեցած խիստ սահմանափակումներով, Արցախում տեղի ունեցած պատերազմով և Հայաստանում հայտարարված ռազմական դրությամբ (լրատվամիջոցների գործունեության հանդեպ կրկին չափազանց խիստ սահմանափակումներ են կիրառվել), ինչպես նաև հետպատերազմական անկայուն քաղաքական և սոցիալական իրավիճակ ՀՀ-ում և Արցախում, հայաստանյան ավանդական և առցանց մեդիա դաշտում տեղի են ունեցել մի շարք էական փոփոխություններ։ Հատկապես ապատեղեկատվության տարածումն այս ժամանակահատվածում շոշափելի չափերի է հասել, ինֆորմացիոն հոսքերը և ալիքները բազմապատկվել են, իսկ խոսքային մանիպուլյացիաները քաղաքական գործիչների ելույթների ու հանրային հաղորդակցության զգալի մաս են կազմում։ Այսօր հայաստանյան ԶԼՄ-ներում առավել քան երբևէ զգացվում է որակյալ լրագրողների, խմբագիրների, առանձին մեդիա խմբագրությունների՝ ապատեղեկությունների, կեղծ լուրերի դեմ պայքար ծավալելու, փաստերի ստուգման ժամանակակից գործիքակազմի կիրառության և կարողությունների զարգացման անհրաժեշտություն։

Հատկապես ժամանակակից փուլում ինֆորմացիայի տարածման գործում սոցիալական ցանցերի (մասնավորապես Ֆեյսբուք, Տիկտոկ, Յություբ, Թվիթեր, Ինստագրամ) դերի մեծացմանը զուգահեռ, դաշտում հայտնված բազմաթիվ նորաստեղծ լրատվամիջոցներից որոշներն ապատեղեկատվության արագ տարածման համար նպաստավոր, երբեմն անգամ միտումնավոր աղբյուր են դառնում։ Կեղծ լուրերի տարածումը հնարավորինս չեզոքացնելու, իսկ դրանց տարածման պարագայում ապատեղեկատվությանը հակազդելու նպատակով վերջին տարիներին Հայաստանում գործում են ոչ մեծաթիվ լրատվամիջոցներ, որոնք ունեն, ժամանակի ընթացքում մշակել են ու լավարկել համապատասխան կարողություններ և գործիքակազմ։ Վերջիններիս ազդեցությունը և դերը Հայաստանի մեդիա միջավայրում նկատելիորեն բարձրացել է, սակայն հայ հանրությունը դեռ շարունակում է առավելապես տեղեկություններ ստանալ այնպիսի լրատվամիջոցներից, որոնք բովանդակություն ստեղծելիս մեծ պատասխանատվություն չեն դրսևորում, երբեմն անգամ չեն ստուգում փաստերը և նորությունների ճշգրտությունը։

[1] 16 մարտի, 2020թ. ՀՀ կառավարության 298 - Ն որոշումը ՀՀ-ում Արտակարգ դրություն հայտարարելու մասին, հասանելի է 15/11/2021-ի դրությամբ [https://www.e-gov.am/gov-decrees/item/33564/]

Հաշվի առնելով Հայաստանում մեդիա միջավայրի, իրականության փոփոխությունը՝ անհրաժեշտություն է առաջացել մտածելու ապատեղեկատվության, կեղծ լուրերի դեմ պայքարի թարմ, նոր առաջ եկած ռիսկերը կառավարող ու դրանց դիմակայող իրավական կարգավորումներ ու լծակներ ձևավորելու մասին, քանի որ գործող կարգավորումները չեն նպաստում միջավայրի առողջացմանը: Այս համատեքստում, իշխանությունների կողմից վերջերս առաջարկվող իրավական լուծումները և մեխանիզմները հիմնականում հետապնդում են սահմանափակումներ մտցնելու պրակտիկա, որն ուղղակի պատժամիջոցներ է սահմանում, տուգանում, ինչն առավել քան խնդրահարույց է, քանի որ ստեղծում է ոչ համագործակցային պայմաններ ու միջավայր ԶԼՄ-ների գործունեության համար:

Ուսումնասիրության նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը

«Հայաստանյան մեդիա ոլորտի քարտեզագրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում» հետազոտությունն իրականացվել է 2021թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Հետազոտության նպատակն է ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում քարտեզագրել ՀՀ մեդիա միջավայրը, առանձնացնել ոլորտում հիմնական ազդեցություն ունեցողներին, նկատել ապատեղեկատվության տարածման առկա օրինաչափությունները, կեղծ լուրերի ձևավորման և տարածման յուրահատկությունները: Հետազոտությունը նաև բացահայտում է ապատեղեկատվության, կեղծ լուրերի դեմ պայքարի ժամանակակից մեթոդները և գործիքակազմը, որն այսօր առկա է հայաստանյան մեդիա ոլորտում:

Սույն փաստաթուղթն առաջնահերթ նպատակ ունի՝

ա) ներկա պայմաններում աջակցել հասարակական ոլորտին, մեդիա քաղաքականություն մշակող պետական և ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կառույցներին ու կազմակերպություններին, որպեսզի վերջիններս կարողանան ճիշտ գնահատել հայաստանյան մեդիա իրականությունը՝ իրավական կարգավորումներ կամ ինքնակարգավորման մեխանիզմներ մշակելու առումով:

բ) լայն հանրությանը ծանոթացնել, թե ինչպիսին է հայաստանյան մեդիա միջավայրը, որոնք են ապատեղեկատվության տարածման և շրջանառման համատեքստում ազդեցություն ունեցողները՝ օգնելով խուսափել սոցիալական իրականության սխալ ընկալումներից:

գ) հավաքագրել ՀՀ-ում իրականացվող ապատեղեկատվության դեմ պայքարի ընթացիկ ծրագրերը,

դ) բացահայտել ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները և յուրահատկությունները, դրանց բնութագիրը, վտանգներն ու խնդիրները:

Միաժամանակ կարիք կա հասկանալու, թե ապատեղեկատվության ձևավորման և տարածման համատեքստում ինչպիսին է հայաստանյան մեդիա միջավայրը.

- որոնք են մեդիա ոլորտում հիմնական ազդեցություն ունեցողները,
- ինչպիսի օրինաչափություններ ու յուրահատկություններ կան ապատեղեկատվության տարածման առումով,
- որոնք են շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագիրը, վտանգները, խնդիրները,
- իրավական ինչպիսի կարգավորումներ կան ապատեղեկատվության դեմ պայքարի համար կամ որքանով են դրանք արդյունավետ,

- ինչպես են գործում առկա իրավական նորմերը,
- արդյոք ԶԼՄ-ները փորձում են նվազեցնել կամ չեզոքացնել կեղծ լուրերը, ինչ գործիքակազմ և մեթոդներն են կիրառում,
- ապատեղեկատվության դեմ պայքարի ինչպիսի ընթացիկ ծրագրեր են առկա Հայաստանում։

Հետազոտության օբյեկտը հայաստանյան մեդիա միջավայրն է, իսկ առարկան՝ դրանում շրջանառվող ապատեղեկատվության դեմ պայքարը, բնութագիրը, վտանգները, դրա դեմ պայքարի ծավալումը, կիրառվող մեթոդներն ու գործիքակազմը, իրավական կարգավորումները, ՀՀ-ում ապատեղեկատվության դեմ պայքարի ծրագրերը։

Հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդներով՝ համադրելով փորձագիտական հարցազրույցների և հայաստանյան մեդիա միջավայրում լսարան, ազդեցություն ունեցողների տեղեկատվական հարթակների ուսումնասիրությունը, թեմայի վերաբերյալ նախկինում առկա հետազոտական հասանելի փաստաթղթերը։

Հետազոտության համար ընտրված մեթոդների ռազմավարությունը ենթադրում է քանակական և որակական մեթոդների նպատակաուղղված համադրում։ Խառը մեթոդներով հետազոտությունը թույլ է տալիս օգտվել քանակական և որակական մեթոդաբանությունների գործիքակազմերից տվյալների հավաքագրման փուլում, ինչպես նաև համադրել երկու մեթոդաբանությունների վերլուծական հնարավորությունները տվյալների վերլուծության և մեկնաբանման փուլում։ Մեթոդաբանության շրջանակում ընտրվել է խառը մեթոդներով հետազոտությունների հաջորդական հետախուզական մոդելը (անգլ.՝ «exploratory sequential design»), քանի որ այն հնարավորություն է տալիս որակական և քանակական մեթոդները կիրառել փուլային հաջորդականությամբ և ստացված տվյալներն օրինաչափորեն ինտեգրել միմյանց։ Հետազոտության առաջին փուլում (հոկտեմբեր, 2021թ.) հավաքագրվել է որակական տեղեկատվություն, որի վերլուծությունն ուղղորդվել է դեպի երկրորդ՝ քանակական փուլ, իսկ վերջում համադրված կերպով վերլուծվել են երկու փուլերում հավաքված տվյալները։ Որակական վերլուծությունը հիմք է դարձել քանակական ուսումնասիրության ենթակա հետազոտական խնդիրներ ձևակերպելու և դրանք բացահայտելու համար։

Հետազոտության շրջանակներում կիրառվել է տեղեկատվության հավաքագրման սոցիոլոգիական երկու մեթոդ՝ փորձագիտական հարցազրույցներ և այլ հետազոտական փաստաթղթերի՝ հանրայնորեն առկա ուսումնասիրություն։ Հայաստանյան մեդիա միջավայրում ապատեղեկատվության տարածումը և պայքարի գործիքները հասկանալու, լրատվամիջոցների կողմից այդ հարցում իրականացված գործողությունները վերլուծելու համար անցկացվել են փորձագիտական հարցազրույցներ հայաստանյան մեդիա միջավայրում ակտիվ գործող լրատվամիջոցների ներկայացուցիչների, խմբագիրների և ղեկավար պաշտոնում (մեդիա կառավարիչ) նշանակված մասնագետների հետ։ Սույն

հետազոտության բալանսավորվածությունը, լիարժեք անաչառությունն ապահովելու համար մասնագիտական հարցազրույցներ են իրականացվել նաև թեմայի վերաբերյալ տեղեկատվությամբ հարուստ անձանց հետ՝ ներառելով մեդիա վերլուծաբաններ, փաստերի ստուգման մասնագետներ և մեդիա միջավայրում կարծիք ձևավորող կամ հեղինակային/ազդեցիկ կարծիք ունեցող անձանց: Անցկացվել է ընդհանուր առմամբ 15 փորձագիտական հարցազրույց:

Մեթոդի կիրառումը թույլ է տվել ոլորտի մասնագետների կուտակած փորձի միջոցով վեր հանել ապատեղեկատվության տարածման ընդհանուր տրամաբանությունը, բնութագիրը, բացահայտել դրանց վտանգները և խնդիրները, հայաստանյան մեդիայում դրանց տարածման հիմնական սկզբնաղբյուրները, ազդեցություն ունեցողները, ինչպես նաև նույնականացնել մեդիա միջավայրում դրանց դեմ պայքար ծավալող ԶԼՄ-ներին, վերջիններիս կիրառած մեթոդները և գործիքակազմը, մյուս՝ ոչ մասնագիտական խմբագրություններ ունեցող ԶԼՄ-ներ կողմից ապատեղեկատվության նվազմանն ուղղված քայլերը, հավաքագրել ՀՀ-ում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում իրականացվող ընթացիկ ծրագրերը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը տեղի է ունեցել բովանդակային և ավանդական մոտեցումների համադրմամբ: Փաստաթղթերի բովանդակային ուսումնասիրությունը (անգլ.՝ «content analysis») ենթադրում է տեղեկատվության քանակական ասպեկտների չափումներ, իսկ ավանդական մոտեցման շրջանակներում ուսումնասիրվում են փաստաթղթերի բովանդակային և կոնտեքստային ասպեկտները: Հետազոտության շրջանակներում որպես փաստաթուղթ են դիտարկվել այն իրավական կարգավորումները, որոնք ունեն օրենքի կարգավիճակ, ոլորտային հետազոտությունները, որոնք իրականացվել են տարբեր կազմակերպությունների կողմից և հանրայնորեն հասանալի են, ԶԼՄ-ների մի շարք հրապարակումներ, որոնք նույնականացվել են առաջին փուլի՝ փորձագիտական հարցազրույցների արդյունքում:

Մանրամասնորեն քննության են ենթարկվել նաև ապատեղեկատվության դեմ պայքարող լրատվամիջոցները, ուսումնասիրվել է վերջիններիս ստեղծած մեդիա բովանդակությունը և այն գործիքակազմը, որն օգտագործվում են փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող խմբագրությունները:

Ուսումնասիրվել են (մեկ ամսվա՝ 2021թվականի հոկտեմբերի 1 - 31 կտրվածքով) ակտիվ հաճախելիություն ունեցող մեդիա հարթակները, ապատեղեկություններ տարածելու հարցում խնդրահարույց կայքերը՝ հիմք ընդունելով Հայաստանում մեդիա սպառման, ապատեղեկատվության և կեղծ լուրերի վերաբերյալ վերջին հետազոտությունները[2]:

[2] «Մեդիա սպառումը Հայաստանում – 2019», հետազոտությունն իրականացրել են Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը (ՄՆԿ) և Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-

Մեթոդի կիրառումը թույլ է տվել հետահայաց քանակապես չափել և համեմատել փորձագիտական գնահատականների արդյունքում ստացված տվյալներն ապատեղեկատվության բնութագրի, վտանգի, խնդիրների, սկզբնաղբյուրների և օրինաչափությունների ու յուրահատկությունների վերաբերյալ:

Ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են կիրառական առաջարկություններ և խորհրդատվականներ (recommandations), որոնց իրականացման շնորհիվ հնարավոր է բարելավել մեդիա միջավայրը Հայաստանում՝ նպաստելով նաև ապատեղեկատվության նվազմանը և պայքարի նոր գործիքների ստեղծմանը, գործընթացի կանոնակարգմանը:

Առաջարկություններ և խորհրդատվականներ ներկայացնելիս հատուկ ուշադրություն է դարձվել Հայաստանում ապատեղեկատվության տարածման դեմ պայքարում միասնական և ժամանակակից գործիքակազմի ներդրման անհրաժեշտությանը, խնդիրներն իրավական կարգավորումների և մեդիայի ինքնակարգավորման մարմինների միջոցով լուծման միջազգային պրակտիկային:

Հայաստանը (CRRC): Արդյունքները հանրայնացվել են 2019-ի հոկտեմբերին, հասանելի է՝ [https://www.crrc.am/wp-content/uploads/2019/03/MICE-Report-2019_.pdf]

«ՀՀ մեդիայի սպառման և ապատեղեկացվածության մակարդակի ուսումնասիրություն». հետազոտությունն անցկացրել են «Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական ՀԿ-ն և «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» ՀԿ-ն (ARP Group): Արդյունքները հանրայնացվել են 2019-ի հոկտեմբերին, հասանելի է՝ [https://uic.am/wp-content/uploads/2019/11/Report_Media_ Final_10.10.19_Q.pdf]

«Ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները հայաստանյան առցանց մեդիայում». հետազոտությունն իրականացվել է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից, այն ամփոփում է 2020 թ. հունիս-օգոստոս ամիսներին իրականացված հետազոտության արդյունքները, հանրայնացվել է 2021-ի մարտին, հասանելի է՝ [https://media.am/hy/lab/2021/03/12/26664/]

«Ապատեղեկատվությունն ու կեղծ տեղեկատվությունը Հայաստանում. դիմակայելով կեղծ պատմույթներին». զեկույցն իրականացվել է Freedom House-ի կողմից, իսկ արդյունքները հանրայնացվել են 2021-ի հունիսին, հասանելի է՝ [https://freedomhouse.org/sites/default/files/2021-07/Disinformation-in-Armenia_Am-final.pdf]:

Ամփոփ

Հաշվի առնելով Հայաստանում մեդիա միջավայրի, իրականության փոփոխությունը՝ անհրաժեշտություն է առաջացել մտածելու ապատեղեկատվության, կեղծ լուրերի դեմ պայքարի թարմ, նոր առաջ եկած ռիսկերը կառավարող ու դրանց դիմակայող իրավական կարգավորումներ ու մեխանիզմներ ձևավորելու մասին, քանի որ գործող կարգավորումները չեն նպաստում միջավայրի առողջացմանը: Այս համատեքստում, իշխանությունների կողմից վերջերս առաջարկվող իրավական լուծումները և մեխանիզմները հիմնականում հետապնդում են սահմանափակումներ մտցնելու պրակտիկա, որն ուղղակի պատժամիջոցներ է սահմանում, տուգանում, ինչն առավել քան խնդրահարույց է, քանի որ ստեղծում է ոչ համագործակցային պայմաններ ու միջավայր ԶԼՄ-ների գործունեության համար:

«Հայաստանյան մեդիա ոլորտի քարտեզագրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում» հետազոտությունն իրականացվել է 2021թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին: Հետազոտության նպատակն է ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում քարտեզագրել ՀՀ մեդիա միջավայրը, առանձնացնել ոլորտում հիմնական ազդեցություն ունեցողներին, նկատել ապատեղեկատվության տարածման առկա օրինաչափությունները, կեղծ լուրերի ձևավորման և տարածման յուրահատկությունները: Հետազոտությունը նաև բացահայտում է ապատեղեկատվության, կեղծ լուրերի դեմ պայքարի ժամանակակից մեթոդները և գործիքակազմը, որն այսօր առկա է հայաստանյան մեդիա ոլորտում:

Սույն փաստաթուղթն առաջնահերթ նպատակ ունի՝

ա) ներկա պայմաններում աջակցել հասարակական ոլորտին, մեդիա քաղաքականություն մշակող պետական և ոչ առևտրային, շահույթ չհետապնդող կառույցներին ու կազմակերպություններին, որպեսզի վերջիններս կարողանան ճիշտ գնահատել հայաստանյան մեդիա իրականությունը՝ իրավական կարգավորումներ կամ ինքնակարգավորման մեխանիզմներ մշակելու առումով:

բ) լայն հանրությանը ծանոթացնել, թե ինչպիսին է հայաստանյան մեդիա միջավայրը, որոնք են ապատեղեկատվության տարածման և շրջանառման համատեքստում ազդեցություն ունեցողները՝ օգնելով խուսափել սոցիալական իրականության սխալ ընկալումներից:

գ) հավաքագրել ՀՀ-ում իրականացվող ապատեղեկատվության դեմ պայքարի ընթացիկ ծրագրերը,

դ) բացահայտել ապատեղեկատվության տարածման օրինաչափությունները և յուրահատկությունները, դրանց բնութագիրը, վտանգներն ու խնդիրները:

Հետազոտությունն իրականացվել է խառը մեթոդներով՝ համադրելով փորձագիտական հարցազրույցների և հայաստանյան մեդիա միջավայրում լսարան, ազդեցություն ունեցողների տեղեկատվական հարթակների ուսումնասիրությունը, թեմայի վերաբերյալ նախկինում առկա հետազոտական հասանելի փաստաթղթերը:

Ուսումնասիրության հիմնական բացահայտումներն ամփոփել ենք ներքոնշյալ եզրահանգումներով.

1. Հիմնվելով փորձագետների գնահատականների վրա՝ հնարավոր է եղել ամրագրել, որ վերջին երկու տարիներին պայմանավորված մի շարք երևույթներով ու գործընթացներով՝ կորոնավիրուսային վարակ, պատերազմ, հետցնցումային ու ներքաղաքական լարվածություն, ապատեղեկատվության հոսքերը զգալիորեն ավելացել են հայաստանյան մեդիա միջավայրում:
2. Հանրային վստահությունը ԶԼՄ-ների հանդեպ բավականին ցածր է: Վստահելի ԶԼՄ-ների թվում հիմնականում առկա են հեռուստաընկերություններ, որոնք ունեն համապետական սփռում: Առցանց լրատվամիջոցների տեղեկատվության հանդեպ հանրային վստահություն գրեթե չկա:
3. Հայաստանում հեռուստաընկերությունները շարունակում եմ մնալ որպես ամենից ազդեցիկ ԶԼՄ-ներ:
4. Ապատեղեկատվություն ուղարկողներին և տարածողներին նշելիս փորձագետներն հիմնականում առանձնացնում են աղբյուրների մի քանի խմբեր:
5. Ապատեղեկատվության տարածման հիմնական հարթակները բարձր դիտողականություն և տեսանելիություն ունեցող ԶԼՄ-ներն են իրականացնում՝ մասնավորապես՝ հեռուստատեսությամբ և սոցիալական ցանցերում տարածելով կեղծ պատմույթներ:
6. Շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագիրը, օրինաչափությունները և յուրահատկությունները բացահայտելու համար կիրառելի է փորձագետների գնահատականների հիման վրա մշակված պարզեցված սխեման, որը ներառում է երեք հիմք՝ տեղեկատվություն ուղարկող, տեղեկատվության ուղերձ և հաղորդակցության կոնտեքստ: Ամբողջը պայմանականորեն կարելի է խմբավորել երեք հիմքով՝«ո՞վ է ասում», «ի՞նչ և ինչպե՞ս է ասում», «ինչո՞ւ կամ ի՞նչ կոնտեքստում է ասում»:
7. Լրագրողների տեղեկություն ստանալու հարցումներն անօրինական մերժելը կամ դրանց թերի, ոչ լիարժեք պատասխանելը ապատեղեկատվության տարածման առումով առանցքային խնդիրների պատճառն են դառնում: Մասնավորապես, երբ պետական մարմինները չեն տրամադրում ժամանակին և լիարժեք տեղեկատվություն, ինչպես նաև պրոակտիվ եղանակով չեն հրապարակում տեղեկատվություն, սա պարարտ հող է ստեղծում ապատեղեկատվության և կեղծ

լուրերի տարածման համար, խեղաթյուրում կառավարություն-հասարակություն հաղորդակցությունը: Գործնականում մեծ թիվ են կազմում ուշացած պատասխանները և անօրինական մերժումները:

8. Պետական կառավարման մարմինները նաև պրոակտիվ հրապարակային չեն գործում: Սեփական նախաձեռնությամբ լիարժեք չեն հրապարակում իրենց գործունեությանն առնչվող տեղեկատվությունը՝ մատչելիության, արդիականության և ամբողջականության սկզբունքների հիման վրա՝ ժամանակին, հասանելի և հասկանալի մարդկանց համար: Պետական մարմինների պաշտոնական կայքերը լիարժեք չեն բավարարում հրապարակայնության և արդյունավետ հաղորդակցության անհրաժեշտ չափանիշները: Պաշտոնական կայքերում հրապարակված փաստաթղթերը չեն համապատասխանում բաց տվյալներ ձևաչափին: Այս պատճառով դժվարանում կամ անհնարին է դառնում լրագրողների համար տարբեր փաստաթղթերի համադրումը, վերլուծումը, դրանցում առկա տեղեկատվության հետ հետագա աշխատանքը:
9. Ապատեղեկատվության, կեղծ լուրերի շարունակական աճը մեծ վտանգ է հանդիսանում ժողովրդավարական գործընթացներում Հայաստանի հաջողելու համատեքստում: Ապատեղեկատվությունը նաև լուրջ վտանգ է ներկայացնում հասարակության համար՝ չնպաստելով տեղեկատվական դաշտի զարգացմանը, որտեղ փաստերի վրա հիմնված բանավեճը չի գերազանցում կոնտեքստային տեղեկության շահարկմանը, մանիպուլյացիաներին ու կեղծիքին:
10. Պետական պաշտոնյաները և գերատեսչությունները սխալ հաղորդակցություն են վարում այնպիսի զգայուն թեմաներով, ինչպիսիք են պատերազմն ու դրա հետևանքները, ինչն ավելացնում է տեղեկատվական վտանգներն ու անապահովության միջավայրը: Առանձին կարևորություն ունի ռազմագերիների և Հայաստանի ու Ադրբեջանի շփման գծի երկայնքով տեղի ունեցող գործընթացների թեման, որը հաճախ ադրբեջանական տեղեկատվական հոսքերի միջոցով որպես ապատեղեկատվություն է ներթափանցվում Հայաստանի տեղեկատվական միջավայր: Չունենալով նաև այսօրինակ դեպքերի դեմ պայքարի միջոցառումների համալիր ռազմավարությունը՝ հայաստանյան մեդիա միջավայրն իրավիճակին պատասխանում է այդ կեղծ լուրերի շրջանառմամբ մինչ այն պահը, երբ պետական գերատեսչությունները ժամանակ են գտնում արձագանքելու:
11. Որոշ գործոններ վտանգավոր են դարձնում համավարակի վերաբերյալ կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը, դավադրության տեսությունների շրջանառումը. մեդիա դաշտը լցված է կեղծ պատմույթներով, ինչը հանրության ուշադրությունը շեղում է հանրային առողջության վերաբերյալ հրահանգներից և ուղղորդումներից:
12. Չնայած ապատեղեկատվության տարածման հանդեպ մտահոգության առկայությանը՝ փորձագետների պնդումների հիմա վրա արձանագրվել է, որ ի

տարբերություն առավել մասնագիտական՝ փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող հարթակների ու խմբագրությունների, հայաստանյան մեդիա միջավայրում ապատեղեկատվության դեմ կանոնակարգված, մշտական պայքար դրան հակազդում չի իրականացվում մեդիա միջավայրի մյուս դերակատարների կողմից։ Վերջիններս առավելապես զբաղվում են սեփական բովանդակություն ստեղծելու խնդրով, քան ապատեղեկատվության դեմ պայքարելով։

13. Հայաստանում գործում են փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող առանձին խմբագրություններ, որոնց նպատակը բացառապես ապատեղեկատվության դեմ պայքար ծավալելն ու հակազդելն է։
14. Քաղաքական դերակատարները շարունակում են օգտագործել սուտ տեղեկություններ ՔՀԿ-ների գործունեության, օտարերկրյա դոնորների և նրանց ենթադրյալ քաղաքական նպատակների մասին: Սա թույլ է տալիս թիրախավորված կեղծ տեղեկատվական արշավներ իրականացնել, որոնք օգտագործվում են հասարակության պառակտելու, խարխլելու քաղաքացիական հասարակության հանդեպ վստահությունը և կասկածի տակ առնելու ժողովրդավարությունը:
15. Հանրային հետաքրքրության հարցերը պետական մարմինների կողմից չեն պարզաբանվում ժամանակին և մատչելի կերպով՝ ստեղծելով տեղեկատվական բաց, որն էլ լցվում է կա՛մ կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությամբ, կա՛մ մնում է դատարկ՝ խարխլելով հանրային վստահությունը պաշտոնական տեղեկատվության հանդեպ։
16. Փորձագետների պնդումներում արձանագրվել է, որ առ այսօր չի մշակվել և ընդունվել ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգային որևէ փաստաթուղթ, ռազմավարություն և գործողությունների պլան։ Ապատեղեկատվության դեմ պայքարը բնորոշվում է որպես հատվածային, այժմրոպեական, կարճաժամկետ ազդեցություն ապահովող և սահմանափակող միջոցառումների ամբողջություն։
17. Վերջին երկու տարիներին Կառավարությունը և Ազգային ժողովը ժամանակ առ ժամանակ հանդես են եկել օրենսդրական տարբեր նախաձեռնություններով՝ փորձելով ստեղծել որոշակի սահմանափակող կարգավորումներ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու և ատելության խոսքն ու անօրինական բովանդակության ծավալը նվազեցնելու նպատակով։ Սակայն այդ օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում հատվածային և դրվագային բնույթ ունեին։ Փորձագետների արձանագրմամբ, դրանք պրոֆեսիոնալ լրագրողական համայնքի կողմից հիմնականում գնահատվել են որպես խոսքի և մամուլի ազատության վրա ճնշումներ:

Ա. Հայաստանյան մեդիա միջավայրում ազդեցություն ունեցողները

2020թ. մարտին հայտարարված արտակարգ դրությունը (նոր կորոնավիրուսային վարակի տարածում կանխարգելելու համար, որն ի հայտ բերեց լրատվամիջոցների որոշ հրապարակումների՝ նախադեպը չունեցած սահմանափակումներ), հուլիսին Հայաստանի հյուսիսում՝ Տավուշում տեղի ունեցած ռազմական գործողությունները (Անվախ հենակետի համար) և սեպտեմբերի 27-ից սկսված ակտիվ ռազմական գործողությունները Արցախում (արդյունքում խիստ սահմանափակումներ կիրառվեցին հատկապես ԶԼՄ-ների նկատմամբ՝ չթույլատրելով ամբողջական լուսաբանում իրականացնել) մեդիա դաշտը զգալիորեն փոխակերպել են: Այդ մասին են վկայում նաև հետազոտության նպատակով մասնագիտական հարցազրույցների մասնակիցները: Գրեթե բոլոր փորձագետներն ընդգծում են, որ ապատեղեկատվությունը, կեղծ լուրերը, ինֆորմացիոն հոսքերը կտրուկ աճել են մի քանի անգամ՝ մեծացնելով նաև մեդիա սպառողի առջև ծառացած մյուս խնդիրները, այդ թվում՝ որտեղից ստանալ ճիշտ, ստուգված տեղեկություններ, լուրեր: Այս ժամանակահատվածում մեծապես ավելացել է նաև տարբեր սոցիալական ցանցերում ակտիվություն դրսևորող կեղծ օգտահաշիվների թիվը, ինչը մասնագետների գնահատմամբ արդյունքն է այն երևույթի, որ ներկայում փոփոխվել են նաև սոցիալական մեդիայի պոտենցիալի և դերի հասարակական ընկալումները:

Հանրությունը կարծես թե այսօր հասկացել է, թե ինչ մեծ ներուժ ունեն սոցիալական հարթակները: Դրանք լսված լինելու և սեփական գաղափարները տարածելու հնարավորություն են տալիս: Արդյունքում սոցիալական ցանցերում ակտիվություն դրսևորելը դարձել է անբաժանելի մաս ինչպես անհատ օգտահաշիվների, այնպես էլ լրատվամիջոցների, պետական կառույցների ներկայացուցիչների համար:

<u>Լրատվական գործակալության ղեկավարի հետ հարցազրույցից</u>

Որոշ փորձագետներ երևույթը բացատրում են որպես Հայաստանի մեդիա դաշտում առկա բազմազանության արդյունք, քանի որ ժամանակակից տեխնոլոգիաներն այսօր հնարավորություն են տալիս կարճ ժամանակում «լսելի լինել»: Բացի այդ, 2018-ից հետո որոշակիորեն նշմարվել է մեդիա դաշտի հանդեպ քաղաքական վերահսկողությունը, որը շոշափելի և տեսանելի է եղել մինչև 2018-ին տեղի ունեցած «Թավշյա հեղափոխությունը»:

Հասարակությունը, մարդիկ, այդ թվում նաև՝ պետական պաշտոնատար անձինք, քաղաքական գործիչները սկսել են օգտվել առիթից, որ կա խոսքի ազատություն, իսկ այդ ազատությունը նրանց համար կարող է շատ հարմար գործիք լինել լսելի դառնալու առումով: Ու այժմ կարելի է ապատեղեկատվություն տարածել, չստուգել սեփական հրապարակումների փաստերը, կեղծ լուրեր շրջանառել, բայց արդյունքում իրավական հետապնդումներ չեն լինի, քանի որ չկա դրա համար անհրաժեշտ որևէ կարգավորում: Անգամ առկա նորմերը չեն կիրառվում այնպես, ինչպես պետք է կիրառվեին:

Մեդիայի շահերի պաշտպանությամբ զբաղվող կառույցի ներկայացուցչի հետ հարցազրույցից

Ակնհայտ է, որ մեդիա միջավայրում առկա բազմազանությունը հանգեցրել է հանրության ինֆորմացիոն բևեռացման, ինչի արդյունքում ներկայում ավելի հեշտ են տարածվում ապատեղեկությունները, կեղծ լուրերը, մանիպուլյացիաները, քաղաքական շահեր հետապնդող քարոզչական թեզերը, քան այդ ամենի ոչ ճշգրիտ լինելու վերաբերյալ հերքումները: Նկատելիորեն փոփոխվել են նաև ապատեղեկատվություն տարածող խմբերի, անհատների ու քաղաքական շահեր ունեցողների շարժառիթները՝ սեփական շահերի դաշտից հիմնականում միտվելով դեպի արժեքների, բարոյականության դաշտ:

Առկա են բավականին մոբիլ խմբեր, անհատներ, որոնք զբաղվում են կեղծ լուրերի ստեղծմամբ ու տարածմամբ: Գործողություններն էլ իրականացվում են բավականին համակարգված կերպով: Այսպես կոչված «ֆեյքերի բանակը» դեռևս շարունակում է հանրային ընկալումների համար տարատեսակ թեզերի նպատակային շրջանառում իրականացնել՝ մեծ վտանգ հանդիսանալով ժողովրդավարական գործընթացներում հաջողելու համատեքստում:

Փաստերի ստուգման մասնագետի հետ հարցազրույցից

Հայաստանում դեռ 2020 թ.-ին հետազոտական փորձեր են կատարվել բացահայտելու, թե որոնք են տեղական մեդիա միջավայրում տարածվող ապատեղեկատվության յուրահատկությունները և ընդհանրությունները, տեքստերում դրանց առկայությունն ինչպես է դիտավորյալ ընդգծվում և տեսանելի դառնում: Չնայած ապատեղեկատվության յուրահատկությունները ինչպես ՀՀ-ում, այնպես էլ աշխարհում պայմանավորված են մի շարք գործոններով, սակայն կարելի է դրանք պայմանականորեն խմբավորել երեք հիմքով՝«ո՞վ է ասում», «ի՞նչ և ինչպե՞ս է ասում», «ինչո՞ւ կամ ի՞նչ կոնտեքստում է ասում»:

Մասնագիտական հարցազրույցների արդյունքում ամբողջացվել է, որ ամենահաճախ հիշատակվող չափանիշներից մեկը հենց տեղեկատվություն ուղարկողն է, այսինքն՝ աղբյուրը կամ սկզբնաղբյուրը: Հատկապես շեշտադրվում է աղբյուրի՝ սպառողի կողմից ծանոթ և վստահելի լինելը, ինչպես նաև դրա հանրային հեղինակությունը: Ըստ մասնագետների՝ ապատեղեկատվություն, կեղծ լուրեր հիմնականում հանդիպում է այնպիսի հրապարակումներում, որոնցում նշված չէ հեղինակը, չկա մասնագիտական ստորագրություն, սկզբնաղբյուրը կամ սկզբնաղբյուրի հղումը, և ոչ հազվադեպ հղումը կատարվում է անհայտ և անորոշ աղբյուրների՝ հաճախ «մեր վստահելի աղբյուրներ», «մեզ հասած լուրեր» նշումով:

Ապատեղեկատվություն ուղարկողներին և տարածողներին նշելիս փորձագետներն հիմնականում առանձնացնում են աղբյուրների մի քանի խմբեր.

1. Գաղափարախոսական խմբեր (ծայրահեղ պահպանողական, ՎԵՏՕ, Ադեկվադ)

2. Ֆեյսբուքյան խմբեր, անձնական իրական կամ կեղծ օգտահաշիվներ ու էջեր

3. Սոցիալական ցանցերում կարծիքի առաջնորդներ և ձևավորողներ

4. Նախկին իշխանություններին պատկանող լրատվամիջոցներ

5. Քլիքբեյթ կայքեր[3]

6. «Սունկ» լրատվամիջոցներ[4]

7. Ռուսական կայքեր կամ թարգմանություններ այդ ռուսական կայքերից

Ապատեղեկատվության տարածման հիմնական հարթակները բարձր դիտողականություն և տեսանելիություն ունեցող ԶԼՄ-ներն են իրականացնում՝ մասնավորապես՝ հեռուստատեսությամբ և սոցիալական ցանցերում՝ տարածելով կեղծ պատմույթներ:

Սոցիալական ցանցերը, մասնավորապես, Ֆեյսբուքը ավելի մեծ նշանակություն ու ճանաչելիություն ձեռք բերեց երկրի հասարակական-քաղաքական կյանքի համար 2018 թվականից հետո, երբ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընտրեց հանրային իրազեկումն առավելապես ապահովել Ֆեյսբուք սոցիալական ցանցի գրառումների և ուղիղ հեռարձակումների միջոցով՝ որպես հասարակության հետ իր կապի հիմնական միջոց: 2019 թ.-ին իրականացված հետազոտության համաձայն[5]՝ քաղաքացիները պետական պաշտոնյաների ֆեյսբուքյան էջերը համարում էին հիմնականում հուսալի, միաժամանակ սոցիալական մեդիան համարելով տեղեկատվության ոչ այնքան հուսալի աղբյուր՝ ավելի մեծ վստահություն հայտնելով հեռուստատեսությանը: Առցանց հանրային խոսույթի մեծ մասը, սակայն, կենտրոնացած է Ֆեյսբուք հարթակում, թեև 2020 թվականին Արցախյան պատերազմի ընթացքում հայաստանցիները սկսեցին ակտիվորեն օգտվել նաև Թվիթեր և Տելեգրամ սոցիալական հարթակներից[6]:

Հայաստանում առցանց ԶԼՄ-ների ստեղծման փուլից ի վեր հաճախ կարելի է նկատել «մատրյոշկայի» էֆեկտը. առցանց լրատվամիջոցները մշտապես պատճենում են նորություններ (հատկապես միջազգային լուրերի բաժնի համար) ռուսական կայքերից, այնուհետև այլ աջակցող տեղական լրատվամիջոցներ վերաթողարկում են տեղեկությունը՝ ամեն մեկը որպես առաջնային աղբյուր նշելով նախորդին՝ այդ կերպ ավելի մեծացնելով

---

[3] Սրանք առաջին հայացքից լրատվական կայքեր են, որոնց գործունեության հիմնական ձևը ամենատարբեր մեթոդներով՝ ներառյալ ապատեղեկատվության տարածմամբ, այցելություններ հավաքելն է, իսկ նպատակը՝ կոմերցիան:

[4] Փաստերի ստուգման մասնագետ, լրագրող Կարինե Ղազարյանը «սունկ» լրատվամիջոցները սահմանվում է հետևյալ կերպ. «...կիսալրատվական, կիսաժամանցային կայքեր, որոնք չեն ստեղծում սեփական բովանդակություն, լի են համատեքստային գովազդով և բազմանում են սնկերի նման» (տե՛ս՝ https://media.am/hy/verified/2019/02/15/11062/, հասանելի է՝ 28.11.2021 դրությամբ):

[5] «ՀՀ մեդիայի սպառման և ապատեղեկացվածության մակարդակի ուսումնասիրություն»

[6] Սամվել Մարտիրոսյան, «Telegram ալիք լրատվականի համար. ինչու և ինչպես», media.am, դեկտեմբերի 1, 2020, հասանելի է՝ [https://media.am/hy/critique/2020/12/01/25240/]

բնօրինակ հաղորդագրության տարածումը: Սա ակտիվորեն կիրառվում է նաև տարբեր Տելեգրամ ալիքների պարագայում, որոնք արագորեն հայտնիություն են ձեռք բերում՝ ազդեցիկ մեդիայում, հատկապես հեռուստատեսությամբ հղվելու արդյունքում:

Վերգետնյա հեռարձակում իրականացնող լրատվամիջոցները (հեռուստաընկերություններ) բավականին ազդեցիկ են Հայաստանում: Ըստ մեդիայի սպառման մասին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան»-ի 2019 թ. ուսումնասիրության՝ հայերի 72 տոկոսն ամեն օր դիտում է համապետական սփռում ունեցող հեռուստաալիքներ, և տեղեկատվության համար ավելի հաճախ ապավինում հեռուստատեսությանը[7]: Առցանց աղբյուրներից և սոցիալական մեդիայից որպես տեղեկատվության ամենից հաճախ օգտագործվող աղբյուր օգտվում է հարցվածների 57 տոկոսը, այն էլ ամենօրյա ռեժիմով, դրան հաջորդում են տեղական սփռում ունեցող հեռուստատեսությունը (40 տոկոս), ռուսական հեռուստաալիքները (26 տոկոս) կաբելային և/կամ արբանյակային (վճարովի) հեռուստաալիքները (25 տոկոս)[8]: Առցանց լրահոսին հետևողների 83 տոկոսը հայտնել է, որ սոցիալական լրատվամիջոցների միջոցով կարող է օգտվել առցանց լրատվությունից, մինչդեռ միայն 17 տոկոսն է հայտնել, որ ստանում է տեղեկատվությունն անմիջապես լրատվական կայքից[9]:

«Մեդիա սպառումը Հայաստանում» հետազոտության արդյունքները հստակորեն ցույց են տվել, որ Երևանում և մարզերում հեռուստատեսությունը շարունակում է մնալ ամենից շատ սպառվող տեղեկատվական աղբյուրը[10]: Թեև պետք է արձանագրել, որ նախորդ տարիների համեմատ հեռուստատեսությամբ տեղեկատվության ստացման մակարդակը շարունակական նվազել է: Չնայած 2021 թ.-ին թվագրված նույնաբովանդակ հետազոտություն առկա չէ, սակայն նախորդ հետազոտությունները, իրականացված 2015 թ.-ին և 2017 թ.-ին հստակ ցույց են տալիս, որ արագ տեմպերով մեծ դերակատարում է ստացել համացանցը, որը, կարծես, այսօր դարձել է տեղեկություններ ստանալու առաջնային աղբյուրը Հայաստանում:

Հայաստանի հանրային մուլտիպլեքսի երեք հաճախականություն հատկացվել է ռուսական երեք ալիքի՝ պետական «ВГТРК», «Ռուսաստան-Կ» և «1-ին ալիք Ռուսաստան» հեռուստաընկերություններին[11]: Այս տեղերը տրամադրվել են մրցույթից դուրս՝ հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերին կնքված հայ-ռուսական միջպետական նոր համաձայնագիրը. «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքում միջազգային այսպիսի

[7] «Մեդիա սպառումը Հայաստանում – 2019» հետազոտություն, էջ 7:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 8:
[10] «Մեդիա սպառումը Հայաստանում – 2019» հետազոտություն
[11] Հախվերդյան Ն., «Օտար պետության ալիքները կրկին կլինեն հանրային մուլտիպլեքսում», media.am, հրապարկվել է՝ դեկտեմբերի 9, 2020, հասանելի է՝ [https://media.am/en/newsroom/2020/12/09/25404/]

պայմանագրերը նշվում են որպես բացառություն: Եթե այսպիսի պայմանագրեր կնքվում են պետությունների միջև, ապա հեռարձակման սլոթը տրվում է առանց մրցույթի[12]:

Հայաստանի տարածքում հեռարձակվող ռուսական ալիքները պակաս կեղծ լուրեր ու ապատեղեկատվություն չեն տարածում երկրում տեղի ունեցող գործընթացների մասին: Վերջիններիս բովանդակությունը, կարող եմ ասել, որ երբեք էլ անաչառ չէ և մշտապես պայմանավորված է քաղաքական նպատակահարմարությամբ: Օրինակ, սա ակնհայտ նկատելի էր հատկապես ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի մասին հրապարակումներում, որոնք մշտապես լի են բազում մանիպուլյացիաներով և կեղծ պնդումներով: Գուցե դա խնդիր չի դիտարկում Ռուսաստանը, բայց ոչ մենք:

Փաստերի ստուգման մասնագետի հետ հարցազրույցից

Միջազգային հանրապետական ինստիտուտը Հայաստանի բնակիչների շրջանում 2021 թ.-ի փետրվարին անցկացրել է հանրային կարծիքի ուսումնասիրություն[13]: Հաշվի առնելով այդ ժամանակ երկրի ներքաղաքական իրավիճակը՝ առանցքում եղել է առաջին հերթին հանրության՝ քաղաքական գործընթացների մասին իրազեկվածությունը և այն հիմնական աղբյուրները, որոնք թույլ են տալիս տեղեկացված լինել: Վստահությունը ԶԼՄ-ների նկատմամբ բավականին ցածր է. 34% չի վստահում որևէ լրատվամիջոցի, իսկ 46%-ը անվանել են առնվազն մեկ հեռուստաալիք 3 վստահելի լրատվամիջոցների շարքում: Լրատվամիջոցներից Հանրային հեռուստաընկերությունն առավել հուսալին է քաղաքական տեղեկատվության ստացման համար, չնայած հարցվածների գերակշիռ մասն առաջին տեղում նշել է ոչ մեկին չվստահելը: Քաղաքացիների շրջանում վստահելի լրատվամիջոցներ են համարվել նաև «Շանթ», «Արմենիա» համապետական սփռում ունեցող հեռուստաընկերությունները: Հիմնականում առցանց, իսկ 2020-ի սեպտեմբերից նաև Հայաստանի բոլոր գլխավոր կաբելային հեռարձակման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հեռուստածրագրերի ցանցում առկա է «Ազատություն» TV-ին, որը նույնանուն ռադիոկայանի խմբագրության կողմից է պատրաստվում: Վերջինիս քաղաքական լրատվության հանդեպ ևս հանրային վստահություն կա: Վստահելության առումով առաջին հնգյակում է «Արմնյուզ» հեռուստաընկերությունը: Այն հասանելի է միայն Երևանում (նաև մայրքաղաքին հարակից մի շարք համայնքներում): Ու չնայած իր հեռուստածրագրի սփռման առումով ունի սահմանափակ հնարավորություն, սակայն մեծապես գերազանցում է մյուս տեղական հեռարձակողներին:

Մյուս լրատվամիջոցների հանդեպ հանրային վստահելիությունն աննշմարելի է: Սա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ հայաստանցիների մեծամասնությունը տեղեկատվություն ստանալու հիմնական ու նախընտրելի աղբյուր չունի և չի նշել:

---

[12] ՀՀ օրենքը «Տեսալսողական մեդիայի մասին», Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, ընդունվել է հունիս 2020, հասանելի է՝ [https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145079]

[13] Հանրային կարծիքի ուսումնասիրություն. Հայաստանի առկա բնակչություն, փետրվար 2021թ., հասանելի է՝ [https://www.iri.org/sites/default/files/final_for_publication_armenia_electoral_reform_march_8_2021.pdf]

Ամբողջական ցանկը հասանելի է ստորև առկա գծապատկերում.



Արդեն 2021 թ.-ի հուլիսին Միջազգային հանրապետական ինստիտուտը հրապարակել է Հանրային կարիծիքի ուսումնասիրման մեկ այլ հետազոտություն՝ պարզելու համար բնակչության վերաբերմունքը կորոնավիրուսին ու քարտեզագրելու հետընտրական սպասելիքները: Կորոնավիրուսի մասին ինֆորմացիայի առավել հուսալի լրատվական աղբյուրների ցանկում հիմնականում հեռուստաընկերություններ են՝ «Հանրային» (23%), «Շանթ» (11%), «Արմենիա» (9%), «Ազատություն» (5%), «Արմնյուզ» (3%): Հարցվածների 2%-ը որպես լրատվամիջոց նշել է նաև Ֆեյսբուքը: Ոչ մեկին չվստահելը կրկին ամենաբարձր արդյունքն ունի (25%): Լրատվական դաշտում և սոցիալական ցանցերում կորոնավիրուսի մասին ապակողմնորոշող կամ կեղծ ինֆորմացիայի ամեն օր հանդիպում է հարցվածների 25%-ը, շաբաթական մի քանի անգամ՝ 14%-ը: 21%-ն ասել է, որ երբեք չի հանդիպել կեղծ լուրերի: Մայրաքաղաք Երևանում այս ցուցանիշն ավելի բարձր է, քան մարզերում՝ 26% ընդդեմ 24%-ի:

Գծապատկերում արտացոլված է կորոնավիրուսի մասին ինֆորմացիայի առավել հուսալի լրատվական աղբյուրների ցանկը



Գծապատկերում արտացոլված է, թե որքան հաճախ են հարցվածները հանդիպում կորոնավիրուսի մասին ապակողմնորոշող կամ կեղծ ինֆորմացիայի



Բ. Հայաստանյան մեդիա դաշտում շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագիրը, առկա խնդիրները

Լրատվամիջոցները և սոցիալական մեդիան ժամանակակից հասարակությունների, այդ թվում՝ Հայաստանում, սոցիալականացման, հասարակական կարծիք ձևավորելու, հանրային քննարկումներ ի հայտ բերելու լուրջ հնարավորություն ունեն: Դրանք հնարավորինս պարզեցնում և մեկնաբանում են սոցիալական իրականությունը, վեր հանում հանրության համար օրակարգային բազմաթիվ հիմնախնդիրներ, տարատեսակ երևույթներ: Ի նկատի ունենալով վերոնշյալը՝ ինֆորմացիոն բազմազան միջավայրում տեղեկատվության սպառումը հեշտ հասանելի է դարձել լայն հանրության համար: Այս համատեքստում ԶԼՄ-ներում և սոցիալական մեդիայում տարածվող տեղեկատվությունը հաճախ նաև ոչ ճշգրիտ է կամ պարունակում է ոչ ամբողջական տեղեկատվություն, իսկ երբեմն էլ միտումնավոր կամ ոչ միտումնավոր ապակողմնորոշում: Այսպիսի մեդիա միջավայրում տեղեկատվական հոսքերը վերահսկելը բավականին բարդ է, քանի որ դրանք ներառում են թերի կամ ոչ ստույգ ինֆորմացիայի մտադրված կամ երբեմն ոչ մտադրված տրամադրում: Այս խնդիրը հատկապես սրվում է, երբ խոսքն վերաբերում է հայաստանյան մեդիա միջավայրին, որը վերջին տարիներին բավականին բևեռացված է:

Այսօր լրատվամիջոցներից շատերը սերտաճել են իրենց սոցիալական մեդիայի հարթակներին, ինչն ավելի է ընդլայնել տեղեկատվական հոսքի շրջանակներն ու ԶԼՄ-ների լսարանը: Նոր կորոնավիրուսային վարակի և Արցախում տեղի ունեցած պատերազմի համատեքստում հայաստանյան մեդիա դաշտի նկատմամբ կիրառված գրաքննությունը, 2018 թ.-ից կառավարող ուժի և նախկին իշխանությունների միջև մեդիայում ձևավորված խոսույթը բազմապատկել է ապատեղեկատվության ծավալները: Ներկայում մի շարք լրատվամիջոցներ քաղաքական, գաղափարախոսական և/կամ ֆինանսական ազդեցությունների կրողներ են: Ներկայիս մեդիա միջավայրում 2018 թ.-ից կառավարող ուժը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ հաճախ ֆրեյմավորվում է որպես «Արևմուտքից ղեկավարվող» իշխանություն, որը միտումնավոր վնասում է Հայաստանի պետականությունը և խոչընդոտում Ղարաբաղյան հակամարտության հայանպաստ կարգավորմանը, չունի համապատասխան կոմպետենցիաներ ղեկավարում իրականացնելու համար: Հաճախ կարելի է հանդիպել նաև Ջորջ Սորոսի կողմից Հայաստանի պետականության թուլացման և ավանդական արժեքների քայքայման վերաբերյալ պատմույթների, նոր կորոնավիրուսային վարակի, իսկ հետագայում նաև պատվաստումների միջոցով համաշխարհային վերահսկողության սահմանման, մարդկանց ամբողջական կառավարման թեմաների, մի շարք մանիպուլյացիաների, որոնք վերաբերում են տարածաշրջանային և աշխարհաքաղաքական հիմնախնդիրներին՝ տուրք տալով դավադրության տեսությունների ակտիվ շրջանառման: Այսօրինակ տեղեկատվական հոսքերը միտումնավոր կամ ոչ միտումնավոր ուղղորդվում են

ատելության քարոզով, սև PR-ով, կեղծ լուրերով և ահռելի ծավալների հասնող ապատեղեկատվությամբ։

Հայաստանում մեդիա դաշտում շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագրիչները նշելիս փորձագետները մեծապես կարևորել են այն գործոնը, թե տեղեկատվությամբ փոխանցվող հաղորդագրության տեքստային ոճը, որակը և բովանդակությունն ինչպիսին է, ինչպես է այն մատուցվում։ Սա հնարավոր է եղել քննել մի քանի մակարդակում՝ հոդվածի վերնագրում, բուն տեքստում, ստորագրված կամ անհեղինակ, բաժնում (լրահոս, բաժին, ամենաընթերցված, խմբագրի ընտրանի և այլն)։

Փորձագետների գնահատմամբ՝ ապատեղեկատվություն պարունակող հրապարակումների վերնագրերում հաճախ կարելի է հանդիպել որոշակիորեն լսարանին գործողությունների ուղղորդող տարրեր, ինչը հավելյալ հետաքրքրություն է առաջացնում ընթերցողների շրջանում՝ ստիպելով կարդալ լուրը։ Որպես ուղղորդման օրինակներ առանձնացվում են չորս տեսակի՝ հարցականներ և այլ կետադրական-զգացմունքային նշաններ պարունակող, շեղատառերով, սենսացիոն բնույթի և բուն բովանդակության կոնտեքստը չարտահայտող վերնագրեր։

«Սենսացիա», «հրատապ», «չիմացաք», «բացառիկ», «շուտ՝ քանի չեն ջնջել» և այլ նման վերնագրերով հրապարակումները մերօրյա մեդիայում հանդիպում է ամեն հարթակում, սակայն եթե որոշում ես սեղմել, բացել, կարդալ, ապա միանշանակ է, որ հրապարակման բովանդակությունը կա՛մ կիսատ է մատուցված, կա՛մ լիովին չի համապատասխանում իրականությանը։

<u>Փաստերի ստուգման մասնագետի հետ հարցազրույցից</u>

Հայաստանյան լրատվամիջոցներում փորձագետներն առանձնացնում են նաև մի խումբ ԶԼՄ-ներ, որոնցում նկատել են ապատեղեկատվական միտումնավոր հոսքեր, կեղծ լուրեր։ Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ առցանց լրատվամիջոցներ, Տելեգրամ ալիքներ, վերգետնյա սփռում ունեցող հեռուստաընկերություններ։

Ապատեղեկատվություն պարունակող հրապարակումների բուն տեքստերը փորձագետների կողմից բնորոշվում են հետևյալ առանձնահատկություններից առնվազն մեկի առկայությամբ, չնայած ավելի հաճառ համալիր բնույթ ունեն.

- Լրագրողական պրոֆեսիոնալիզմի, գրագիտության և էթիկայի խախտումներ
- Տեքստի ոչ միատիպ ոճ (մի քանի ոճերի, տառատեսակների կիրառում)
- Իռացիոնալ, հուզական, ինտուիտիվ զունավորումներ
- Սուբյեկտիվ բնորոշումներ, ածականներ, վերաբերականներ, երանգավորումներ
- Բացականչական նշաններ
- Ուշադրություն գրավող պատկերներ

- Սխալ մեթոդաբանությամբ միտումնավոր կամ ոչ միտումնավոր կազմված պատկերագրեր (ինֆոգրաֆներ)

Ապատեղեկատվական բովադակության բնութագրիչների բացահայտման մեջ փորձագետների գնահատմամբ կարևոր է նաև այն ազդեցությունը և տպավորությունը, որը բովանդակությունը միտումնավոր կամ ոչ միտումնավոր կերպով թողնում է լսարանի վրա։ Վերոնշյալ բնութագրիչների կիրառմամբ, ըստ էության, տեղի է ունենում լսարանի տպավորությունների և էմոցիաների ուղղորդում և կառավարում, ինչը մեծացնում է ապատեղեկատվության հնարավոր ազդեցությունը տեղեկատվություն ստացողի մոտ։

Մյուս կարևոր բնութագիչը, որ փորձագետների դիտարկումներից հնարավոր է եղել ձևակերպել, ուղարկվող տեղեկատվության կոնտեքստավորումն է։ Այս գործոնը հատկապես էական նշանակություն ունի այն տեսանկյունից, որ ընդգծում է այն համատեքստը և նպատակները, որոնց լույսի ներքո փոխանցվում է որոշակի տեղեկատվություն՝ բովանդակային կոնկրետ շեշտադրումներով, ձևավորմամբ։ Ըստ այդմ, փորձագետներն առանձնացնում են ապատեղեկատվության հասցեավորման նպատակների կամ կոնտեքստների մի քանի խումբ՝ քաղաքական շահեր (այդ թվում՝ աշխարհաքաղաքական), լրատվամիջոցի շահեր, անհատական շահեր (մեծ բաղադրիչ ունի ֆինանսական կողմը)։

Հայաստանյան մեդիա միջավայրում ապատեղեկատվությունը հաճախ քաղաքական քարոզով է զուգորդված, իսկ վերջին շրջանում ամենաակտուալ թեմաները ներառում են կորոնավիրուսային վարակը, պատերազմը Արցախում և Ղարաբաղյան հիմնահարցի կարգավորումը, գենդերային հիմնախնդիրները (դրանով պայմանավորված Լանսարոտեի կամ Ստամբուլյան կոնվենցիայի ընդունումն ու վավերացումը, ԼԳԲՏ հիմնահարցեր և այլն)։ Այս կոնտեքստում, փորձագետների շրջանում առավել հազվադեպ, բայց հիշատակվում են նաև մի շարք այլ թեմաներ՝ ներառելով Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-ՀԱՊԿ, Հայաստան-ԵՄ հարաբերությունները, Հայաստանի և Ադրբեջանի զինված ուժերի միջև տեղի ունեցող բախումները, գործող իշխանությունների «Արևմուտքի գործակալ» կամ «սորոսական» լինելը, կոռուպցիան, միգրացիան և եկեղեցին։

Այս համատեքստում առանձին կարևորություն ունի ռազմագերիների և Հայաստանի ու Ադրբեջանի շփման գծի երկայնքով տեղի ունեցող գործընթացների թեման, որը հաճախ ադրբեջանական տեղեկատվական հոսքերի միջոցով որպես ապատեղեկատվություն է ներթափանցում Հայաստանի տեղեկատվական միջավայր։ Չունենալով նաև այսօրինակ դեպքերի դեմ պայքարի միջոցառումների համալիր ռազմավարություն՝ հայաստանյան մեդիա միջավայրը իրավիճակին պատասխանում է այդ կեղծ լուրերի շրջանառմամբ մինչ այն պահը, երբ պետական գերատեսչությունները ժամանակ են գտնում արձագանքելու։ Հաճախ պետական գերատեսչությունները միմյանց հակասող հաղորդագրություններ են տարածում, ինչն ավելի է սրում և լարում միջավայրը՝ հանրային տագնապ ստեղծելով։

Չնայած վերոնշյալ բնութագրիչները փաստում են, որ ապատեղեկատվությունը, կեղծ լուրերը չեն ծագում մեդիա միջավայրի միայն մեկ կողմից, սակայն դրանք լուրջ վտանգ են ներկայացնում հասարակության համար՝ չնպաստելով տեղեկատվական դաշտի զարգացմանը, որտեղ այսօր փաստերի վրա հիմնված բանավեճը ցավալիորեն չի գերազանցում կոնտեքստային տեղեկության շահարկմանը, մանիպուլյացիաներին ու կեղծիքին: Ավելին՝ հաճախ պետական պաշտոնյաները և գերատեսչությունները սխալ հաղորդակցություն են վարում այնպիսի զգայուն թեմաներով, ինչպիսիք են պատերազմն ու դրա հետևանքները, ինչն ավելացնում է տեղեկատվական վտանգներն ու անապահովության միջավայրը:

Որոշ գործոններ հատկապես վտանգավոր են դարձնում համավարակի վերաբերյալ կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը, դավադրության տեսությունների շրջանառումը՝ մեդիա դաշտը լցնելով կեղծ պատմույթներով, ինչը հանրության ուշադրությունը շեղում է հանրային առողջության վերաբերյալ հրահանգներից և ուղղորդումներից: Թեպետ հասարակության շփոթության և թերահավատության որոշակի մակարդակ ակնկալելի էր հատկապես համավարակի սկզբում, քանի որ ամբողջ աշխարհում առողջապահական համակարգի մասնագետներն ու պետական պաշտոնյաներն ամեն կերպ փորձում էին հասկանալ նոր կորոնավիրուսային վարակի էությունն ու համապատասխան արձագանք տալ դրան, կեղծ և խեղաթյուրված լուրերի հետևանքները երկարաժամկետ կտրվածքով սրել են Հայաստանի հանրային առողջության վիճակը: Որոշ մասնագետներ և հայտնի հասարակական գործիչներ ստեղծում և հզորացնում էին վարակի վերաբերյալ ընդհանուր առմամբ բացասական պնդումներ՝ հայաստանցիներին խոցելի դարձնելով հատկապես ապատեղեկատվության հետևանքների նկատմամբ: Այս գործիչները հանրային առողջության համար վնասակար պատմույթներ են լեգիտիմացնում: Իրավիճակն է՛լ ավելի է սրվել ներկա փուլում, երբ տարբեր լաբորատորիաների կողմից ստեղծվել են պատվաստանյութեր: Սույն թեմայի վերաբերյալ 2021 թ.-ին իրականացվել է նաև համապարփակ կարիքների գնահատում Ինֆորմացիայի ազատության կենտրոնի մասնագետների կողմից, սակայն արդյունքները հասանելի չեն հանրայնորեն:

Հայաստանում վարակի դեմ պատվաստումը տեղի է ունենում կամավոր հիմունքներով, և գործընթացը լրջորեն վտանգված է ամիսներ տևած հակապատվաստման պատմույթների պատճառով: Երբեմն նման տեսակետներին աջակցում են առողջապահական ոլորտի ներկայացուցիչները, ինչը վտանգավորությունը բազմապատկում է, քանի որ այդ դերակատարների վստահելիությունը կարող է շփոթություն առաջացնել և հանրությանը ետ պահել պատվաստվելուց:

Հասարակական գիտակցության մեջ հատկապես հասակարական ոլորտի ներկայացուցիչների, ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների վերաբերյալ շրջանառվող ապատեղեկատվության («Արևմուտքի գործակալներ», «սորոսականներ»,

«պետականություն խարխլողներ») կուտակումն արդեն իսկ ունեցել է վտանգավոր հետևանքներ: Հրադադարի մասին եռակողմ հայտարարությունից հետո՝ 2020 թ.-ի նոյեմբերի 10-ին, հարձակման են ենթարկվել ԲՀՀ-Հայաստանի և «Ազատ Եվրոպա/Ազատություն» ռադիոկայանի տեղական գրասենյակները[14]:

Պատերազմից հետո իշխանության փոփոխություն պահանջող և իշխանության ձգտող քաղաքական խմբերը, կուսակցությունները շարունակում են օգտագործել սուտ տեղեկություններ ՔՀԿ-ների գործունեության, օտարերկրյա դոնորների և նրանց ենթադրյալ քաղաքական նպատակների մասին[15]:

Այս իրավիճակում ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ: Այսօր Հայաստանում տեղեկատվական միջավայրն անտեսված է, հասարակական անկեղծ խոսույթ ձևավորված չէ, իսկ լրագրողական պրոֆեսիոնալ աշխատանքը շարունակում է զիջել առասպելներին, կեղծ պատմույթներին, ապատեղեկատվությանը: Սա թույլ է տալիս մեկ այլ խնդրի ի հայտ գալ՝ թիրախավորված կեղծ տեղեկատվական արշավներ: Նման արշավներն օգտագործում են հասարակության պառակտելու, խարխլում քաղաքացիական հասարակության հանդեպ վստահությունը և կասկածի տակ առնում ժողովրդավարությունը, ուստի խնդրի անտեսումը վտանգում է ընդհանուր Հայաստանի ժողովրդավարական առաջընթացի հիմքերը:

Երբ մեդիա միջավայրն առերեսվում է 2020 թ.-ի հետցնցումներին և արդի փուլում ազգային տեսլականի կերտման դժվարություններին, ապատեղեկատվության, կեղծ լուրերի տարածումն ավելի ու ավելի է նեղացնում դաշտը երկրի մարտահրավերների, հնարավորությունների և ապագայի վերաբերյալ փաստերի վրա հիմնված բանավեճերի և դիսկուրսների համար:

Միջազգային փորձն այս համատեքստում կարող է օգտակար լինել Հայաստանին: Օրինակ, Փոյնթեր ինստիտուտի նախաձեռնությամբ 2015 թ.-ին ստեղծվել է Միջազգային փաստերի ստուգման ցանց, որը միավորել է փաստեր ստուգող կազմակերպություններին ամբողջ աշխարհից՝ վերջիններին հնարավորություն և մեթոդներ տրամադրելով, երբեմն նաև ֆինանսավորում ապահովելով առավել դիմակայուն լինել ապատեղեկատվությանը, պայքարել ու հակազդել ապատեղեկատվական հոսքերին՝ ունենալով սեփական գործիքակազմ[16]: Ոչ պակաս կարևոր են մասնագիտական հանրության համար Փոյնթերի

---

[14] Հարձակում «Ազատության» գրասենյակի վրա, հրապարակվել է 10 նոյեմբերի, 2020, հասանելի է [https://www.azatutyun.am/a/30939683.html]
Մկրտչյան Ա., Հարձակում «Բաց հասարակության հիմնադրամներ»-ի հայաստանյան գրասենյակի վրա, հրապարակվել է 11 նոյեմբերի, 2020, հասանելի է [https://www.azatutyun.am/a/30942405.html]

[15] «Սորոսական 5-րդ շարասյունը» մեծ թափով լծվել է հակառուսական քարոզչություն իրականացնելու դավադիր գործընթացին. Էդուարդ Շարմազանով, Իրավունք, [https://iravunk.com/?p=192637&l=am]

[16] Հայաստանյան մեդիա միջավայրի արդի ներկայացուցիչներից և ոչ մեկը դեռևս ցանցի անդամ չէ, չնայած միջնորդավորված (վրացական գործընկերոջ միջոցով) կերպով կարողացել է համագործակցել: Ցանցը ոչ

հովանու ներքո գործող Միջազգային փաստերի ստուգման ցանցի կողմից ամեն տարի իրականացվող մեդիա համաժողովները, որոնց ժամանակ քննարկվում են աշխարհի տարբեր երկրների փորձը և ապատեղեկատվության հիմնական բնութագրիչները՝ հաշվի առնելով նաև այն միջավայրը, որն առկա է տարածաշրջանում և աշխարհում (պատերազմ, համավարակ, երաշտ, սննդի և ջրի խնդիր, կլիմայի փոփոխություն, գլոբալ տաքացում և այլն)[17]:

միայն վերապատրաստման դասընթացներ է կազմակերպում, այլև հնարավորություն է տալիս անդամակցող կազմակերպություններին ստանալ մեթոդական ուղեցույցներ և խորհրդատվականներ:

[17] Խոսքը «Global Fact-Checking Summit»-ի մասին է, որը հայտնի է որպես «Global Fact» համաժողով:

Գ. Հայաստանյան մեդիայի փորձն ապատեղեկատվության դեմ պայքարում. ինչպես են ԶԼՄ-ները նվազեցնում կամ չեզոքացնում կեղծ լուրերը

Ապատեղեկատվության դեմ պայքարում Հայաստանի քաղաքացիական հասարակության և ազդեցիկ լրատվամիջոցների հիմնական օրակարգը ներառում է անկախ լրատվամիջոցների հզորացում, լրատվամիջոցների պատկանելիության և ֆինանսավորման թափանցիկության ձեռքբերում, լրատվամիջոցների ինքնակարգավորման մեխանիզմների խթանում, փաստերի ստուգման նախաձեռնություններ և մեդիագրագիտության ուսուցում: Վերջին երկու տարիներին մի շարք լրագրողական հասարակական կազմակերպություններ հանդես են եկել տարբեր նախաձեռնություններով ուղղված հասարակության մեդիագրագիտության բարձրացմանը, որը պետք է նպաստի ապատեղեկատվության ծավալների նվազեցմանը: Այս համատեքստում առանցքային կարևորություն ունի Հայաստանում հանրակրթական չափորոշիչներում նոր առարկաների ներառումը, որ թույլ կտա բարձրացնել հանրության դիմադրողականությունը ապատեղեկատվական հոսքերին՝ սկսած վաղ շրջանից:

Վերջին շրջանում զգալիորեն ավելացել են ԶԼՄ-ներում մեդիագրագիտության և փաստերի ստուգման վերաբերյալ հաղորդումները՝ ապատեղեկատվության դեմ պայքարը դարձնելով յուրատեսակ ինքնակազմակերպում:

ա/ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի կողմից նույնպես իրականացվել են երկարաժամկետ ու կարճաժամկետ նախագծեր՝ նպատակ ունենալով ուսումնասկան հաստատություններում լավարկելու իրավիճակը. մի շարք հայաստանյան բուհերում ստեղծվել են փաստերի ստուգման կրթական լաբորատորիաներ, «Ֆեյքաբաղ» հաղորդում (Սամվել Մարտիրոսյան, Արթուր Պապյան, Լյուսի Մանվելյան), լրագրողական թեմատիկ հրապարակումներ են եղել:

բ/ Հանրային լրագրության ակումբի կողմից իրականացվել են մի շարք նախագծեր՝ «Փաստերի ստուգման ցանցի ստեղծում», «Ֆակտ Ռադար» հարթակի ստեղծում և վարում, «Ինֆոդեմիա» բազմամաս հաղորդման ստեղծում:

գ/ ՍիվիլՆեթը սկսել է նոր և ինքնատիպ ձևաչափ՝ «Շաբաթվա ֆեյքերը», որը փորձ է պայքարելու ապատեղեկատվության տարածման դեմ: Մեդիա փորձագետ Արթուր Պապյանն ամեն շաբաթ բացահայտում է առավել շրջանառված կեղծ լուրերն ու պատմում է ապատեղեկատվական թեզերի մասին:

դ/ Առաջին ալիքի «Մեդիագրագիտություն» հաղորդումն ուղղված է ընդհանուր համացանցային գիտելիքների և մեդիագրագիտության բարձրացմանը: Ունի բավականին լայն լսարան: Մեդիա փորձագետ Սամվել Մարտիրոսյանը ներկայացնում է համացանցից

օգտվելու հիմնական սկզբունքները, ինչպես նաև հանրությանը տեղեկացնում է մեդիա վտանգների մասին։

2019 թ.-ի սեպտեմբերից մինչև 2020 թ.-ի հունիսն էլ Հանրային հեռուստաընկերությունը, Երևանի մամուլի ակումբը, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և Լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմինն իրականացրել են համատեղ մեծ հեռուստանախագիծ՝ «Մեդիա դիտորդ» հաղորդումը։ Այն երկխոսության վայր էր, որտեղ հանդիպում էին լսարանն ու մեդիան՝ քննարկելու մասնագիտական ու էթիկային վերաբերող թեմաներ, լրագրողի և հանրության հարաբերությունների գրված ու չգրված կանոններ, խմբագրական բարդ որոշումներ, և դրանց վերաբերյալ բողոքներ, հարցադրումներ։

ե/ «Ֆակտոր» առցանց հեռուստաընկերությունը 2021 թ.-ի հունիսից որոշել է սեփական պայքարը մղել ապատեղեկատվական հոսքերի դեմ։ Լրատվամիջոցի սոցիալական մեդիայում առկա հաշիվները բավականին ակտիվ են, հատկապես Ֆեյսբուքում, և հաճախ օգտատերերը կեղծ լուրեր են շրջանառում։ Լրատվամիջոցի տարբեր հրապարակումների տակ նախկինում կարելի էր տեսնել տասնյակ մեկնաբանություններ, որոնք ակտիվ հղում էին պարունակում՝ ուղղորդելով մարդկանց դեպի կեղծ տեղեկատվական հարթակներ։ Այժմ լրատվամիջոցի SMM մասնագետները մանրազնին խմբագրում են ՖԲ օգտատերերի թողած մեկնաբանությունները, նախ զգուշացնում, ապա հեռացնում են իրենց հարթակում գրված կեղծ լուրերը, ապատեղեկատվությունը, իսկ այն տարածող օգտահաշիվներին չեն բլոկավորում՝ չխոչընդոտելով վերջիններիս ազատ խոսքի արտահայտմանը։

զ/ «ՀԵՏՔ» առցանց լրատվամիջոցը ունի փաստերի ստուգման մասնագետ։ Խմբագրությունում բարձր են գնահատում նման մասնագետի առկայությունը։ Վերջինիս հիմնական գործառույթը «ՀԵՏՔ»-ի գործընկերների հրապարակումներում առկա փաստական սխալների վերացումն է, սակայն նաև հաճախ առանձին հրապարակումներ են կատարվում՝ պայքարելով հանրային մարմինների, այդ թվում՝ պետական պաշտոնյաների տարածած ապատեղեկատվության դեմ։ «ՀԵՏՔ»-ում չեն փորձում առանձին փաստերի ստուգման խմբագրություն ունենալ, սակայն 2021 թ.-ին նոր մասնագիտական վարքականոնի նախագիծ է մշակվել՝ ապատեղեկատվության դեմ պայքարը հաշվի առնելով։ Դեռևս 2002թ. լրատվամիջոցն ընդունել է էթիկայի կանոնագիր, որում տեղ գտած սկզբունքներին պարտավոր է հետևել «ՀԵՏՔ»-ի յուրաքանչյուր լրագրող։ Փաստերի ստուգման նոր կանոնագիրը նպատակ ունի լավարկելու միջավայրը։ «ՀԵՏՔ»-ը օգտվում է «Truly Media» հարթակից՝ օգտագործելով բավականին հետաքրքիր և նոր գործիքակազմ՝ մշակված միջազգային համագործակցության արդյունքում։

է) Սիվիլնեթը իր խմբագրությունում 2021թվականի հոկտեմբերից հիմնել է փաստերի ստուգման բաժին՝ 3 մասնագետից բաղկացած, ովքեր իրականացնում են փաստերի

ստուգում ամենօրյա ռեժիմով ու օգնում խմբագրությանը խուսափել կեղծ լուրերից: Բաժնի հիմնադրմանն աջակցել է Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանությունը:

Ի տարբերություն ՀՀ լրատվամիջոցների մեծ մասի, որոնց նպատակը ոչ ամենևին ապատեղեկատվության դեմ պայքարն է, այլ հանրային իրազեկում իրականացնելը, մեծ աշխատանք են կատարում ապատեղեկատվության դեմ մասնագիտական պայքար մղող, փաստերի ստուգում, ճշգրտում իրականացնող առանձին խմբագրությունները:

ա) Հայաստանում փաստերի ստուգման լրագրության առաջամարտիկներից մեկը Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի «MEDIA.am» մասնագիտական հարթակի «Ստուգված է» բաժինն է[18]: Առաջին հրապարակումներն այս բաժնում հայտնվել են դեռևս 2012 թվականին, սակայն ունեցել են ոչ հաճախակի պարբերականություն:

Ներկայում «Ստուգված է» բաժինը գրեթե ամենօրյա ռեժիմով կատարում է փաստերի ստուգում և սոցիալական ցանցերում շրջանառվող տարբեր տեղեկությունների ճշգրտում (verification): Հրապարակումների թեման նույնպես բազմազան է՝ հակապատվաստումային արշավների դեմ տեղեկատվական պայքարից մինչև հայաստանյան քաղաքական գործիչների՝ հանրային միջավայրում քննարկվող հայտարարությունների ճշգրտում, մանիպուլյացիաների բացահայտում, իշխանության և ընդդիմության ներկայացուցիչների կողմից տարածվող ապատեղեկությունների դեմ պայքար: «Ստուգված է» բաժնի հրապարակումները ժանրային և մատուցման առումով բազմազան են՝ տեքստ, պատկերներ, ինֆոգրաֆիկա, տարատեսակ քուիզ-հարցադրումներ, տվյալների վիզուալիզացիա...

2021թ. հունիս-հուլիս ամիսներին (Հայաստանում սպասվող արտահերթ խորհրդարանական ընտրություններից առաջ և հետո) վրացական «FactCheck.ge» հարթակի հետ համատեղ (այն միջազգային IFCN ցանցի անդամ է, ինչը թույլ է տալիս համագործակցել Ֆեյսբուքի հետ) «MEDIA.am»-ի փաստերի ստուգման թիմն իրականացրել է Ֆեյսբուք սոցիալական հարթակի հայաստանյան սեգմենտում տարածվող ապատեղեկությունների ստուգում, ճշգրտում և կեղծ լուրեր տարածող էջերի պիտակավորում: Ներկայում այդպիսի գործունեության ծավալման համար «MEDIA.am»-ի դեմ կա հայցադիմում «Հրապարակ» օրաթերթի կողմից[19]:

Հետազոտությունն իրականացնելու փուլում «Ստուգված է» բաժնի հեղինակները երեքն են՝ Կարինե Ղազարյան, Արշալույս Բարսեղյան և Օֆելյա Սիմոնյան: Վերջիններս ամենօրյա ռեժիմով ուսումնասիրում եմ սոցիալական ցանցերում ամենաքննարկվող թեմաները, քաղաքական հայտարարությունները և փորձում ճշգրտել, թե արդյոք ամենը

---

[18] «Ստուգված է» բաժնի հրապարակումները հասանելի են 15/11/2021-ի դրությամբ [https://media.am/hy/category/verified/]

[19] Դատական Գործ N: ԵԴ/31882/02/21, հասանելի է 15/11/2021-ի դրությամբ [http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204182199]

ճիշտ է և իրական։ 2020թ. օգոստոսից մինչև 2021թ. հունիս Կարինե Ղազարյանը և Արշալույս Բարսեղյանը համատեղ հեղինակային փոդքաստ են ստեղծել «Խորանալու թեմա» վերնագրով։ Առայժմ հրապարակված է 7 մաս։ Այն նպատակ ունի հնարավորինս մեծացնել հարթակի լսարանը և ներգրավվել նոր մեդիա սպառողների։

բ) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպությունը 2016 թվականից զբաղվում է փաստերի ստուգման լրագրությամբ։ Կազմակերպության կազմում գործում է «Փաստերի ստուգման հարթակը»՝ fip.am դոմեյնային հասցեով (նախկինում այն հասանելի էր որպես sut.am)։ Հարթակը հիմնականում զբաղվում է տեղական, ինչպես նաև տարածաշրջանային մեդիայում տարածվող կեղծ լուրերի և ապատեղեկատվության հայտնաբերմամբ ու լուսաբանմամբ։ Ժամանակ առ ժամանակ հարթակում հրապարակվում են նաև հետաքննական նյութեր, որոնցում մեծ տեղ է գրավում հատկապես բաց տվյալների, հանրային ռեգիստրների օգտագործումը, ինչպես նաև տվյալների վիզուալիզացիան։

2020 թվականից fip.am հարթակում հրապարակվում է «Փաստաչափ» հաղորդումը, որը կարճ տեսանյութի ձևաչափով շաբաթվա կտրվածքով ամփոփում է այն գլխավոր, հիմնական կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը, որին հրապարակումների միջոցով անդրադարձել է Փաստերի ստուգման հարթակի թիմը։

Ըստ fip.am հարթակում հասանելի տեղեկության՝ Փաստերի ստուգման հարթակի թիմը բաղկացած է 5 լրագրողից, մեկ խմբագրից և մեկ գլխավոր խմբագրից։

2020-ից հարթակը հրապարակումներին կցում է նաև որոշակի պիտակավորում՝ օգտագործելով սեփական փաստաչափ գնահատման համակարգը՝ «Սխալ», «Մեծամասամբ սխալ», «Առանց վճռի», «Մեծամասամբ ճիշտ», «Ճիշտ», «Ֆեյք» և «Մանիպուլյատիվ»։

գ) 2019-ից մինչև 2021-ի մայիս փաստերի ստուգման լրագրությամբ է զբաղվել (ներկա պահին թարմացումներ չկան, վերջին հրապարակումները թվագրվում եմ 2021-ի մայիս) նաև Տեղեկատվության ստուգման կենտրոնը՝ infocheck.am դոմեյնային հասցեով։ Ի տարբերություն նախորդ երկուսի՝ այս հարթակն անկախ ու չեզոք չէ իր գործունեության մեջ, այն ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի նախագիծն է և հիմնականում ստուգել է լրատվամիջոցների հրապարակումները՝ փորձելով հանրությանը ներկայացնել նաև կառավարության տեսակետը։

«Գործունեության նպատակն է պաշտպանել քաղաքացիներին տեղեկատվական դաշտում տեղ գտած կեղծիքներից։ Այստեղ կարող եք գտնել մեդիատիրույթում տարածվող կեղծ լուրերի հերքումները, պետական գերատեսչությունների պարզաբանումները, ինչպես

նաև օբյեկտիվ ու ճշգրիտ տեղեկատվություն՝ Կառավարության գործունեության վերաբերյալ»,- նշված է հարթակի «Մեր մասին» բաժնում։

Հարթակում հրապարակումները մշտապես անստորագիր են եղել. չկան հեղինակներ։ Մասնագիտական հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ infocheck.am-ի փաստերի ստուգման թիմը բաղկացած է եղել 3 լրագրողից և մեկ խմբագրից։ Վերջիններիս ակտիվ աջակցել են նաև «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի մյուս բաժինները (օրինակ, առցանց, հեռարձակվող և տպագիր ԶԼՄ-ների բովանդակության մոնիթորինգ իրականացնող թիմը)։

դ) Փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվելու և ապատեղեկատվության դեմ պայքարի առումով համեմատաբար նոր հարթակ է InfoCom.am դոմեյնային տիրույթում գործող առցանց լրատվամիջոցը։ Վերջինս գործունեությունը սկսել է 2018-ի գարնանը՝ որպես Տելեգրամյան ալիք։

Առաջին հրապարակումները «Փաստերի ստուգում» բաժնում[20] հայտնվել են 2019-ի սեպտեմբերին, բայց առավել կանոնակարգված և պարբերական բնույթ ստացել են միայն 2020-ի մարտից։ Հարթակը վերջին ամիսներին մեծ ուշադրություն է դարձնում հատկապես հակապատվաստումային քարոզչությանը՝ փորձելով մատուցել ճշգրտված տեղեկություններ։ Ավելի վաղ՝ 2020-ին «Փաստերի ստուգում» բաժնում տեղ էին գտնում նոր կորոնավիրուսային վարակի մասին ճշգրտված տվյալներ և ստուգված տեղեկություններ։ Հարթակում առավել գերակշռում է տեքստային բովանդակությունը, երբեմն կան նաև պատկերներ, տեսանյութեր։

ե) «AntiFake.am» փաստերի ստուգման անկախ հարթակի նմանակումն առավել հաճախ կեղծ լուրերի տարածմամբ է զբաղվում։ Սա հետաքրքրիր մարտավարություն է և բավականին հետաքրքիր կիրառում է ստացել Հայաստանում։ «Antifake.am» կայքը, որը հիմնադրել է «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ-ն, պնդում է, որ անաչառ է, անկախ և նվիրված է գործող կառավարության «ստերը» բացահայտելու գործին։ Այնուամենայնիվ, կայքը պարբերաբար հրապարակում է չստուգված պնդումներ կամ ապատեղեկատվություն։ «Antifake.am»-ի բովանդակությունը հիմնականում կենտրոնանում է Հայաստանում «Սորոսի գործակալների» և «օտարերկրյա դերակատարների» պատմությունների վրա։

Տեղական և միջազգային անկախ փաստերի ստուգման հարթակների հետաքննությունների համաձայն՝ այս նախաձեռնության հիմքում ընկած անձինք սերտորեն առնչվում են ծայրահեղական խմբերի հետ, ինչպիսիք են «ՎԵՏՕ»-ն և

[20] «Փաստերի ստուգում» բաժնի հրապարակումները հասանելի են 15/11/2021-ի դրությամբ [https://infocom.am/hy/Infotags/infotag?p=1&i=Փաստերի_ստուգում]

«Ադեկվադ»-ը[21], որոնք, իրենց հերթին, կապված են նախկին քաղաքական ռեժիմի հետ և ապատեղեկատվության հզորացման համար կիրառում են ԶԼՄ-ների և սոցիալական մեդիա հաշիվների մի ամբողջ ցանց[22]: Սա հատկապես վտանգավոր երևույթ է. փաստերի ստուգման կեղծ քողի օգտագործումը ոչ միայն օգնում է այս հարթակներին տարածել կեղծիք և ավելի հավաստի ներկայացնել կեղծ լուրերը, այլև խաթարում է վստահությունը պրոֆեսիոնալ, անկախ փաստերի ստուգման նախաձեռնությունների հանդեպ:

Այսպիսով՝ ի տարբերություն առավել մասնագիտական՝ փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող հարթակների ու խմբագրությունների, հայաստանյան մեդիա միջավայրում ապատեղեկատվության դեմ կանոնակարգված, մշտական պայքար, դրան հակազդում չի իրականացնում: Այդպիսի առաքելություն իրականացնելու ցանկություն փորձագետները չեն տեսնում. խմբագրական քաղաքականություն առավելապես այս կամ այն իրադարձության մասին իրազեկում իրականացնելուն է ուղղված, և միմիայն խիստ անհրաժեշտության դեպքում է ԶԼՄ-ների մեծամասնությունը զբաղվում կեղծ լուրերի, ապատեղեկատվության դեմ պայքարով, դրանց միմիայն ճշգրտված տեղեկատվությամբ ու փաստերի ստուգմամբ հակազդելով: Այդ առաքելությունն իրականացնում են տարբեր ՔՀԿ-ների երկարաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը կամ, նախևառաջ, փաստերի ստուգմամբ զբաղվող խմբագրությունները:

[21] Առավել մանրամասն տե՛ս «Իշխանական քարոզչամեքենայի TOP 10 առասպելները», Ադեկվադ, հունիս, 2019, https://www.youtube.com/watch?v=rwzkqmNSwsk:

[22] “Armenia Assailed by Deceptive ‘Fact-Checking’ Groups, Part 1: The Players,” DFR Lab, մայիսի 2, 2019, https://medium.com/dfrlab/armenia-assailed-by-deceptive-fact-checkinggroups-part-i-the-players-2ce03daf2d28:

Դ. Ապատեղեկատվության դեմ պայքարի իրավական կարգավորումներն ու լծակները

Իրավամբ, ապատեղեկատվության լայն տարածումը կարելի է նշել որպես կառավարության առջև ծառացած ամենալուրջ մարտահրավերներից մեկը, որը պահանջում է հավասարակշռված ու երկարաժամկետ լուծումներ: Ապատեղեկատվությունը սպառնում է կառավարության բոլոր բարեփոխումներին ու զարգացման ծրագրերին, այն կարող է վտանգել կառավարության բոլոր նախաձեռնություններն ու զարգացման ծրագրերի իրականացումը: Այն խարխլում է պետական կառույցների հանդեպ հանրային վստահությունը, շեղում քաղաքական դիսկուրսը և խաթարում հանրային կյանքի ներդաշնակությունը:

Առ այսօր չի մշակվել և ընդունվել ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգային որևէ փաստաթուղթ, ռազմավարություն և գործողությունների պլան: Ապատեղեկատվության դեմ պայքարը կարելի է բնորոշել հատվածային, այժմրոպեական, կարճաժամկետ ազդեցություն ապահովող և սահմանափակող միջոցառումների ամբողջություն: Մյուս կողմից, հանրային հետաքրքրության հարցերը պետական մարմինների կողմից չեն պարզաբանվում ժամանակին և մատչելի կերպով՝ ստեղծելով տեղեկատվական բաց, որն էլ լցվում է կա՛մ կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությամբ, կա՛մ մնում է դատարկ՝ խարխլելով հանրային վստահությունը պաշտոնական տեղեկատվության հանդեպ:

Վերջին երկու տարիներին Կառավարությունը և Ազգային ժողովը ժամանակ առ ժամանակ հանդես են եկել օրենսդրական տարբեր նախաձեռնություններով՝ փորձելով ստեղծել որոշակի սահմանափակող կարգավորումներ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու և ատելության խոսքն ու անօրինական բովանդակության ծավալը նվազեցնելու նպատակով: Սակայն այդ օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում հատվածային և դրվագային բնույթ ունեին: Ավելին, դրանք պրոֆեսիոնալ լրագրողական համայնքի կողմից հիմնականում գնահատվել են որպես խոսքի և մամուլի ազատության վրա ճնշումներ:

Հայաստանի քաղաքացիական հասարակությունը, մեդիա կառույցները մշտապես կողմ են հանդես գալիս հիմնականում ինքնակարգավորմանը, մեդիակրթությանը և ապատեղեկատվության երկարաժամկետ լուծումների համար առավել ռազմավարական պլանավորմանը, սակայն պետությունը՝ ի դեմս իշխանությունների, խոշոր հաշվով միայն կարճաժամկետ կամ ամբողջությամբ չկանոնակարգված, անհստակ ջանքեր է գործադրում ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում: Դեռ 2020թ. ապրիլին, երկրի տեղեկատվական դաշտը նոր կորոնավիրուսային համավարակի համատեքստում տարածվող ապատեղեկատվությանը դիմակայման ջանքերին իբրև թե համապատասխանեցնելու նպատակով իշխանությունները նախկինում նախադեպը

չունեցող խստությամբ սահմանափակեցին լրատվամիջոցների գործունեությունը՝ թույլատրելով լուսաբանել համավարակը հողում կատարելով միմիայն պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկություններին, սակայն տեղական ՔՀԿ-ների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների դժգոհության ֆոնին կարճ ժամանակ անց վերացվեցին սահմանափակումները[23]: 2020թ. Արցախում պատերազմի ժամանակ իշխանությունների ներդրած սահմանափակումների արդյունքում լրագրողները, խմբագրությունները ստիպված էին պատերազմի մասին տեղեկատվություն ստանալու համար ապավինել միայն պաշտոնական աղբյուրներին, այլապես խախտում կարող էր արձանագրվել, որի համար սահմանված էին բարձր տուգանքներ[24]:

Փորձագետների համոզմամբ հենց այդ սահմանափակումներն ու պետական կառույցների թույլ հաղորդակցությունը համատեղ նպաստեցին Հայաստանում կեղծ լուրերի և ապատեղեկատվության հոսքի բազմապատկմանը:

Սահմանափակելով լրատվամիջոցների գործունեությունը ինչպես համավարակի սկզբնական փուլում, ապա նաև ռազմական դրությամբ պայմանավորված Արցախում պատերազմի ամբողջ ժամանակահատվածում՝ պետությունը յուրատեսակ տեղեկատվական վակուում ստեղծեց, որը երկար չէր կարող այդպես միակողմանի մնալ: Այլընտրանքային տեղեկատվության անհրաժեշտություն կար: Արդյունքն էլ եղավ այն, որ արդեն նոյեմբերին եռակողմ հայտարարությունից հետո տեղեկատվական հոսքերի կառավարման յուրատեսակ անիշխանություն է այժմ:

<u>Առցանց պարբերականի խմբագրի հետ հարցազրույցից</u>

Վերջին տարիներին օրենսդիր իշխանությունը մի շարք փորձեր է ձեռնարկել՝ օրենքների միջոցով արձագանքելու հայաստանյան մեդիա միջավայրի խնդիրներին, այդ թվում՝ փոփոխություններ են կատարվել նաև Քրեական օրենսգրքում: «Իմ քայլը» խմբակցության պատգամավոր, այսօր ԱԺ խոսնակ Ալեն Սիմոնյանի ներկայացրած և 2021թ. մարտին ընդունված օրինագծի համաձայն՝ եռապատկվելու էին վիրավորանքի և զրպարտության համար առավելագույն տույժերը՝ դառնալով համապատասխանաբար 3 և 6 միլիոն ՀՀ դրամ[25]: Ավելի վաղ՝ փետրվարին, առաջին ընթերցմամբ առաջարկվել էր հնգապատկել վիրավորանքի և զրպարտության համար առավելագույն տույժերը՝ Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններով վիրավորանքի համար առաջարկվում էր 1 միլիոնի փոխարեն մինչև 5 միլիոն դրամ փոխհատուցման չափ

[23] Ծատրյան Հ., «Արտակարգ դրության ժամանակ մեդիայի աշխատանքն ու մեդիայի վերաբերյալ սահմանափակումները», ՀԼԱ, 2020, հասանելի է [https://covid.pjc.am/wp-content/uploads/2020/07/arm_Research_Media_Freedom_During_COVID19.pdf]

[24] Նալբանդյան Ն., «Սահմանափակումները՝ ռազմական դրության ընթացքում», Ազատություն, սեպտեմբերի 28, 2020, https://www.azatutyun.am/a/30862808.html

[25] Խաչատրյան Մ., Զրպարտության և վիրավորանքի համար տուգանքի չափերը կբարձրացվեն, հրապարակվել է 24 մարտի, 2021, Azatutyun.am, հասանելի է [https://www.azatutyun.am/a/31167354.html]

սահմանել, իսկ զրպարտության պարագայում՝ 2 միլիոնի փոխարեն մինչև 10 միլիոն դրամ[26]:

Տեղական և միջազգային իրավապաշտպան կառույցները, քննադատել են օրենսդրական նախաձեռնությունը, որը վտանգում է խոսքի ազատությունը և ԶԼՄ-ների ֆինանսական կենսունակությունը, և հորդորել են իշխանություններին զերծ մնալ ազատ խոսքի տուգանման միջոցով առողջ տեղեկատվական դաշտ ստեղծելու ջանքերից[27]: ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանն ապրիլի 15-ին չէր ստորագրել այդ օրենսդրական նախագիծը՝ ուղարկելով այն Սահմանադրական դատարան՝ վերանայման[28]: Ավելի ուշ 2021 թ.-ի հոկտեմբերին ՍԴ-ում որևէ հակասություն չեն գտել, և օրենքն արդեն ուժի մեջ է մտել:

2021թ. փետրվարին քննարկված մեկ այլ օրինագիծ առաջարկում էր արգելել լրատվամիջոցներին հղում կատարել «սոցիալական ցանցերի անանուն աղբյուրներին»՝ հիմնավորելով, որ նախագիծը կօգնի դիմակայել սոցիալական ցանցերի, հատկապես Տելեգրամ հարթակում գործող կեղծ ալիքներին և կանխել լրատվամիջոցների կողմից ապատեղեկատվության տարածումը[29]: Հոկտեմբերի 28-ին Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ քննարկել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության մի խումբ պատգամավորների հեղինակած ««Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ ու Քաղաքացիական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը: Հեղինակներն առաջարկել են օրենքում ավելացնել նոր հասկացություն՝ «չնույնականացված աղբյուրներ», ինչը նշանակում է, որ հնարավոր չէ պարզել այդ աղբյուրները տնօրինողին և ստեղծողին: Առաջարկվել է լրատվամիջոցների համար պատասխանատվություն սահմանել չնույնականացված աղբյուրներին հղում կատարելու դեպքում: Նախատեսվել է փոփոխել նաև ֆինանսավորման աղբյուրների թափանցիկության մասին հոդվածը: Հաշվետվությունը ժամանակին չներկայացնելու կամ օրենքով արգելված աղբյուրներին հղում կատարելու դեպքում առաջարկվել է լրատվական գործունեություն իրականացնողին տուգանել սահմանված նվազագույն աշխատավարձի երեքից-

[26] Սահակյան Ն., ԱԺ-ն առաջին ընթերցմամբ ընդունեց զրպարտություն և վիրավորանքի համար փոխհատուցման չափը խստացնող օրինագիծը, 11 փետրվարի, 2021, Azatutyun.am, հասանելի է [https://www.azatutyun.am/a/31098133.html]

[27] "Armenia: New Amendments Threaten to Stifle Media Freedom and Freedom of Expression," Freedom House, մարտի 26, 2021, https://freedomhouse.org/article/armenia-newamendments-threaten-stifle-media-freedom-and-freedomexpression

[28] Նախագահը չի ստորագրել վիրավորանքի և զրպարտության համար տուգանքները մեծացնող օրենքը և այդ հարցով դիմել է ՍԴ, 15 ապրիլի, 2021, Azatutyun.am, հասանելի է [https://www.azatutyun.am/a/31204903.html]

[29] ՀՀ «Զանգվածային լրատվության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, փետրվարի 2021, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=60991

հինգհարյուրապատիկի չափով: Պետական կառույցներում չեն կարող հավատարմագրվել համացանցում գործունեություն իրականացնող այն լրատվամիջոցները, որոնք սահմանված ժամկետում չեն ներկայացնի ֆինանսական հաշվետվությունն ու նույնականացման տվյալները[30]:

Հուլիսի 30-ի արտահերթ նստաշրջանում էլ ԱԺ-ում երկրորդ ընթերցմամբ ընդունվել է օրենքի մի նախագիծ, որով հայհոյանքն ու ծանր վիրավորանքը քրեականացվել են[31]: 2020թ.-ի սեպտեմբերից ուժի մեջ մտած օրենքով՝ վիրավորանքի և հայհոյանքի համար հոկտեմբերի 21-ի դրությամբ արդեն հարուցվել է 9 քրգործ[32]:

Մեդիայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցները խիստ քննադատաբար են վերաբերվում ՀՀ իշխանությունների այս միջոցառումներին՝ պատժամիջոցներն անվանելով «անկախ լրատվամիջոցների դեմ մահակ»[33]:

ՔՀԿ ներկայացուցիչների մտավախությունն այն է, որ նմանօրինակ օրենսդրությունը կարող է լինել իշխանությունների ձեռքում գործիք, և ապատեղեկատվության դեմ պայքարի քողի տակ հեշտությամբ կիրառվել օրինական ազատ խոսքի և լրագրողական գործունեության դեմ: Նմանատիպ միջոցները պահի ազդեցության բնույթ ունեն, հաճախ անարդյունավետ են արագ փոփոխվող մեդիա միջավայրում և չեն կարողանում տարբերակել խնդրահարույց վարքագծի տեսակները՝ միատեսակ մոտեցում ցուցաբերելով այնպիսի խնդիրների հանդեպ, ինչպիսիք են զրպարտությունն ու ապատեղեկատվությունը[34]:

Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների կողմից արձանագրվել են, որ չափազանց խնդրահարույց են Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ)՝ ապատեղեկատվության հետևում կանգնած մարդկանց հայտնաբերելու փորձերը: Չնայած վարչապետ Նիկոլ Փաշինյանը և վերջինիս թիմակիցները պատեհ-անպատեհ հայտարարում են, որ խոսքի ազատությունն ավելի կարևոր է, քան «կառավարությանը կեղծ լուրերից պաշտպանելը»[35], 2019 թ. ապրիլի 4-ին նա ԱԱԾ-ին հրամայեց խստորեն հետևել

---

[30] Խորհրդարանն առաջին ընթերցմամբ քննարկել է «Զանգվածային լրատվության մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունները, Ազգային ժողովի պաշտոնական կայք, հասանելի է [http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=15378&year=2021&month=10&day=28&lang=arm]

[31] ՀՀ քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին օրենքի նախագիծ, հասանելի է ԱԺ պաշտոնական կայքում [http://www.parliament.am/draft_history.php?id=12656&lang=arm]

[32] Ասրյան Գ., Վիրավորանքի և հայհոյանքի համար հարուցվել է 9 քրգործ, https://media.am/hy/newsroom/2021/10/21/30123/

[33] «Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին 2020թ. տարեկան զեկույց», Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե, հունվարի 26, 2021, https://khosq.am/reports/հայաստանում-խոսքի-ազատության-վիճակի-24

[34] «Լրատվամիջոցներին կարգելվի՞ հղում կատարել անանուն աղբյուրներին», 1Lurer, փետրվարի 7, 2021, https://www.youtube.com/watch?app=desktop&v=fn_IVsygNP4

[35] «Փաշինյանը խոսքի ազատությունն ավելի կարևոր է համարում, քան կառավարությանը կեղծ լուրերից պաշտպանելը», Արմենպրես, հունվարի 31, 2019, https://armenpress.am/arm/news/962640.html

հասարակական կարծիքը մանիպուլացնող լրատվամիջոցներին կամ սոցիալական ցանցերի օգտատերերին՝ ներկայացնելով դա որպես ազգային անվտանգության խնդիր[36]: Վերջին երեք տարվա ընթացքում արդեն մի քանի դեպք է գրանցվել, երբ ԱԱԾ-ն Ֆեյսբուք սոցիալական ցանցի օգտահաշիվների հետևում կանգնած անհատներին բերման է ենթարկել բռնություն հրահրելու, ատելության խոսք տարածելու կամ ազգային անվտանգությանը սպառնացող հիմքերով[37]: Անհասկանալի է մնում, թե ինչպես է ԱԱԾ-ն տվյալ դեպքերում գնահատում սպառնալիքը կամ հանցավորությունը, քանի որ «կեղծ լուրերը» բացահայտելուն և պատժելուն ուղղված նման լայն կոչերը կարող են խախտել ազատ արտահայտվելու իրավունքը:

Հատկանշական է, որ ակտիվ ռազմական գործողությունների ավարտից հետո 2021-ին հայ հասարակությունը բախվել է հակամարտության հետևանքներին, հընթացս փոփոխվել են պետության և լրատվամիջոցների վերաբերյալ հանրային ընկալումները: 2021թ. Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI-Armenia) հետազոտության արդյունքների համաձայն՝ պատերազմից հետո պետական մարմինների աշխատանքի վերաբերյալ հասարակական կարծիքի անկում է նկատվում: Վարչապետի աշխատակազմի աշխատանքի վերաբերյալ դրական կարծիքը 2019 թ. 72 տոկոսի համեմատ նվազել է՝ 2021 թ. հասնելով 54 տոկոսի, Ազգային ժողովի դեպքում իջել է 32 տոկոս 2019 թ. 62 տոկոսի համեմատ: Չնայած Հայաստանի հասարակության վերաբերմունքն ու սպասելիքները արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո լրացուցիչ հետազոտություն են պահանջում՝ անհերքելի է, որ հայաստանցիները պատերազմից հետո ճշմարտություն և հավաստի տեղեկատվություն են փնտրում մարտերի բռնկման, դրանց վարման, հրադադարի հայտարարության և դրա հետևանքների վերաբերյալ:

Պետական գերատեսչությունների՝ միմյանց հակասող հայտարարություններն էլ երբեմն ավելի են խորացնում առկա հաղորդակցային ճգնաժամը: Այս փնտրտուքը տեղի է ունենում երկրի ապագայի հանդեպ անորոշության, ազգային անվտանգության և ինքնիշխանության խոցելիության, պատերազմի և կորուստների հուզական ցնցումների ֆոնին: Իշխանությունների կողմից հետևողական և հստակ հաղորդագրությունների պակասի, ինչպես նաև ապատեղեկատվության դեմ պայքարի ուժեղ ռազմավարության բացակայութան պատճառով Հայաստանի հասարակությունը մնում է անտեղյակ և խոցելի տեղեկատվական վակուումը լրացնող կեղծ պատմությթների հանդեպ:

---

[36] Նալբանդյան Ն., Ստեփանյան Ռ., «Վարչապետ. Համացանցում մանիպուլյացիաներ անողները պետք է շատ կոշտ հակահարված ստանան», Ազատություն, ապրիլի 4, 2019, https://www.azatutyun.am/a/29861696.html

[37] Սարգսյան Լ., “Fighting Fake News or Censoring Speech Online,” EVN Report, հունվարի 20, 2020, https://www.evnreport.com/raw-unfiltered/fighting-fake-news-orcensoring-speech-online

Ե. Եզրահանգումներ

Ուսումնասիրության հիմնական բացահայտումներն ամփոփել ենք ներքոնշյալ եզրահանգումներով.

1. Հիմնվելով փորձագետների գնահատականների վրա՝ հնարավոր է եղել ամրագրել, որ վերջին երկու տարիներին պայմանավորված մի շարք երևույթներով ու գործընթացներով՝ կորոնավիրուսային վարակ, պատերազմ, հետցնցումային ու ներքաղաքական լարվածություն, ապատեղեկատվության հոսքերը զգալիորեն ավելացել են հայաստանյան մեդիա միջավայրում։

2. Հանրային վստահությունը ԶԼՄ-ների հանդեպ բավականին ցածր է։ Վստահելի ԶԼՄ-ների թվում հիմնականում առկա են հեռուստաընկերություններ, որոնք ունեն համապետական սփռում։ Առցանց լրատվամիջոցների տեղեկատվության հանդեպ հանրային վստահություն գրեթե չկա։

3. Հայաստանում հեռուստաընկերությունները շարունակում եմ մնալ որպես ամենից ազդեցիկ ԶԼՄ-ներ։

4. Ապատեղեկատվություն ուղարկողներին և տարածողներին նշելիս փորձագետներն հիմնականում առանձնացնում են աղբյուրների մի քանի խմբեր։

5. Ապատեղեկատվության տարածման հիմնական հարթակները բարձր դիտողականություն և տեսանելիություն ունեցող ԶԼՄ-ներն են իրականացնում՝ մասնավորապես՝ հեռուստատեսությամբ և սոցիալական ցանցերում՝ տարածելով կեղծ պատմույթներ։

6. Շրջանառվող ապատեղեկատվության հիմնական բնութագիրը, օրինաչափությունները և յուրահատկությունները բացահայտելու համար կիրառելի է փորձագետների գնահատականների հիման վրա մշակված պարզեցված սխեման, որը ներառում է երեք հիմք՝ տեղեկատվություն ուղարկող, տեղեկատվության ուղերձ և հաղորդակցության կոնտեքստ։ Ամբողջը պայմանականորեն կարելի է խմբավորել երեք հիմքով՝ «ո՞վ է ասում», «ի՞նչ և ինչպե՞ս է ասում», «ինչո՞ւ կամ ի՞նչ կոնտեքստում է ասում»։

7. Ապատեղեկատվության, կեղծ լուրերի շարունակական աճը մեծ վտանգ է հանդիսանում ժողովրդավարական գործընթացներում Հայաստանի հաջողելու համատեքստում։

8. Ապատեղեկատվությունը նաև լուրջ վտանգ է ներկայացնում հասարակության համար՝ չնպաստելով տեղեկատվական դաշտի զարգացմանը, որտեղ փաստերի վրա հիմնված բանավեճը չի գերազանցում կոնտեքստային տեղեկության շահարկմանը, մանիպուլյացիաներին ու կեղծիքին։

9. Պետական պաշտոնյաները և գերատեսչությունները սխալ հաղորդակցություն են վարում այնպիսի զգայուն թեմաներով, ինչպիսիք են պատերազմն ու դրա հետևանքները, ինչն ավելացնում է տեղեկատվական վտանգներն ու անապահովության միջավայրը: Առանձին կարևորություն ունի ռազմագերիների և Հայաստանի ու Ադրբեջանի շփման գծի երկայնքով տեղի ունեցող գործընթացների թեման, որը հաճախ ադրբեջանական տեղեկատվական հոսքերի միջոցով որպես ապատեղեկատվություն է ներթափանցվում Հայաստանի տեղեկատվական միջավայր: Չունենալով նաև այսօրինակ դեպքերի դեմ պայքարի միջոցառումների համալիր ռազմավարությունը՝ հայաստանյան մեդիա միջավայրը իրավիճակին պատասխանում է այդ կեղծ լուրերի շրջանառմամբ մինչ այն պահը, երբ պետական գերատեսչությունները ժամանակ են գտնում արձագանքելու:

10. Որոշ գործոններ վտանգավոր են դարձնում համավարակի վերաբերյալ կեղծ լուրերն ու ապատեղեկատվությունը, դավադրության տեսությունների շրջանառումը. մեդիա դաշտը լցված է կեղծ պատմույթներով, ինչը հանրության ուշադրությունը շեղում է հանրային առողջության վերաբերյալ հրահանգներից և ուղղորդումներից:

11. Չնայած ապատեղեկատվության տարածման հանդեպ մտահոգության առկայությանը՝ փորձագետների պնդումների հիմա վրա արձանագրվել է, որ ի տարբերություն առավել մասնագիտական՝ փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող հարթակների ու խմբագրությունների, հայաստանյան մեդիա միջավայրում ապատեղեկատվության դեմ կանոնակարգված, մշտական պայքար, դրան հակազդում չի իրականացվում մեդիա միջավայրի մյուս դերակատարների կողմից: Վերջիններս առավելապես զբաղվում են սեփական բովանդակություն ստեղծելու խնդրով, քան ապատեղեկատվության դեմ պայքարելով:

12. Հայաստանում գործում են փաստերի ստուգման լրագրությամբ զբաղվող առանձին խմբագրություններ, որոնց նպատակը բացառապես ապատեղեկատվության դեմ պայքար ծավալելն ու հակազդելն է:

13. Քաղաքական դերակատարները շարունակում են օգտագործել սուտ տեղեկություններ ՔՀԿ-ների գործունեության, օտարերկրյա դոնորների և նրանց ենթադրյալ քաղաքական նպատակների մասին: Սա թույլ է տալիս թիրախավորված կեղծ տեղեկատվական արշավներ իրականացնել, որոնք օգտագործվում են հասարակության պառակտելու, խարխլելու քաղաքացիական հասարակության հանդեպ վստահությունը և կասկածի տակ առնելու ժողովրդավարությունը:

14. Փորձագետների պնդումների արդյունքում արձանագրվել է, որ առ այսօր չի մշակվել և ընդունվել ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգային որևէ փաստաթուղթ, ռազմավարություն և գործողությունների պլան: Ապատեղեկատվության դեմ պայքարը բնորոշվում է որպես հատվածային, այժմրոպեական, կարճաժամկետ ազդեցություն ապահովող և սահմանափակող միջոցառումների ամբողջություն:

15. Հանրային հետաքրքրության հարցերը պետական մարմինների կողմից չեն պարզաբանվում ժամանակին և մատչելի կերպով՝ ստեղծելով տեղեկատվական բաց, որն էլ լցվում է կա՛մ կեղծ և մանիպուլյատիվ տեղեկատվությամբ, կա՛մ մնում է դատարկ՝ խարխլելով հանրային վստահությունը պաշտոնական տեղեկատվության հանդեպ։

16. Վերջին երկու տարիներին Կառավարությունը և Ազգային ժողովը ժամանակ առ ժամանակ հանդես են եկել օրենսդրական տարբեր նախաձեռնություններով՝ փորձելով ստեղծել որոշակի սահմանափակող կարգավորումներ՝ ապատեղեկատվության դեմ պայքարելու և ատելության խոսքն ու անօրինական բովանդակության ծավալը նվազեցնելու նպատակով։ Սակայն այդ օրենսդրական նախաձեռնությունները հիմնականում հատվածային և դրվագային բնույթ ունեին։ Փորձագետների արձանագրմամբ, դրանք պրոֆեսիոնալ լրագրողական համայնքի կողմից հիմնականում գնահատվել են որպես խոսքի և մամուլի ազատության վրա ճնշումներ։

Զ. Առաջարկություններ և խորհրդատվականներ

Ուսումնասիրության և փորձագիտական հարցազրույցների վերլուծության հիման վրա մշակվել են հետևյալ առաջարկությունները և խորհրդատվականները՝ Հայաստանում ապատեղեկատվության և կեղծ լուրերի տարածման պատճառով ստեղծված խնդիրների լուծման ուղղությամբ: Առաջարկությունները թեմատիկորեն ուղղորդված են և ներառում են առաջարկություններ կառավարության, օրենսդիր մարմնի, անկախ վերահսկող մարմինների, մեդիայի և քաղաքացիական հասարակության համար:

● Աջակցել անկախ լրատվամիջոցների զարգացմանը՝ խրախուսելով փաստերի ստուգման լրագրության զարգացմանը բոլոր խմբագրություններում

Անկախ, փաստերի վրա հիմնված լրագրությունը կարևոր է ապատեղեկատվությանը հակազդելու և համագործակցային տեղեկատվական միջավայր կառուցելու համար: Կեղծ լուրերին անկախ լուսաբանմամբ հակադրվելն ինքնին կատարյալ լուծում չէ, սակայն խմբագրությունների կարողությունների զարգացումը հնարավորություն է տալիս մեղմելու իրավիճակը: Ճշմարտության հանդեպ խոսույթ ձևավորելը և դրան աջակցող և տեղեկատվական մանիպուլյացիան մերժող միջավայր ստեղծելը կդառնա ապատեղեկատվությանը հակազդելու լավ հիմքը, և այստեղ առանցքային է անկախ լրատվամիջոցների դերը, որոնք ոչ միայն իրազեկման գործառույթ կարող են իրականացնել, այլև կհակազդեն ապատեղեկատվության տարածմանը:

Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների համահարթ զարգացման հիմնական խոչընդոտներից մեկը մեդիա միջավայրի թուլությունն է: Ներկա մարտահրավերները ներառում են պատկանելիության վերաբերյալ ոչ թափանցիկ ինֆորմացիա, խմբագրական անկախության բացակայություն և սահմանափակ ֆինանսական ռեսուրսներ (մասնավորապես՝ ֆինանսապես կայուն մոդելների պակաս):

Հայաստանի կառավարությունը և տեղական ու միջազգային դոնորները պետք է աջակցեն անկախ լրատվամիջոցների զարգացմանը՝ ֆինանսական կենսունակության, կարողությունների ընդլայնման, տեխնիկական աջակցության և օրենսդրական բարեփոխումների բազմազան տարբերակների միջոցով:

● Իրականացնել բարեփոխումներ մեդիա միջավայրում

Մեդիայի համապարփակ բարեփոխումները պետք է լինեն կառավարության օրակարգում, չունենան մաս-մաս, այժմրոպեական և քաղաքական նախասիրությամբ պայմանավորված լուծումներ: Դրանք պետք է իրականացվեն լրատվամիջոցների և/կամ քաղհասարակության հետ խորհրդակցությունների միջոցով: Օրենսդիր մարմնի ներկայացուցիչները պետք է աշխատեն լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության հետ՝ մշակելու մեդիա բարեփոխումների համատեղ ռազմավարություն՝ լուծելով երկարատև խնդիրներ, ինչպիսիք են պատկանելիության թափանցիկությունն ու հեռարձակման լիցենզիաների առկայությունը:

Մեդիա բարեփոխումը նախևառաջ պետք է ապահովի խոսքի ազատությունն ու տեղեկատվության ազատ հոսքը: Օրենսդիրները պետք է զգուշանան միջոցներից, որոնք ապատեղեկատվությունը կապում են այնպիսի երևույթի հետ, ինչպիսին է ատելության խոսքը, կամ խիստ պատիժ են կիրառում խախտումների համար:

● Խթանել լրատվամիջոցների էթիկայի վարքականոնների և ինքնակարգավորման մեխանիզմների ստեղծմանը

Հայաստանում բազմաթիվ անկախ լրատվամիջոցներ, հասարակական կազմակերպություններ և լրագրողական խմբեր ակտիվորեն աշխատում են ապատեղեկատվության տարածումը դադարեցնելու և լրատվամիջոցների աշխատակիցների շրջանում էթիկական վարքի մշակույթ զարգացնելու ուղղությամբ:

Լրագրողական կազմակերպությունները, քաղհասարակությունը և պետական մարմինները պետք է աջակցեն նման նախաձեռնությունների կարողություններին և նրանց աշխատանքը ներառեն ապատեղեկատվությանը դիմակայելու ջանքերում: Առաջարկվում է ստեղծել փաստերի ստուգման ոչ ֆորմալ համագործակցության ցանց ոլորտում ներգրավված քաղ հասարակության խմբերի մասնակությամբ:

● Զարգացնել պետական/հանրային լրատվամիջոցների կարողությունները

Փաստերի ստուգման լրագրության առաջընթացի առումով չափազանց կարևոր է նաև հանրային միջոցներից ֆինանսավորվող լրատվամիջոցների գործունեությունն ապատեղեկատվության դեմ պայքարի և կեղծ լուրերին հակազդելու առումով: Մի շարք երկրներ լուծումներ են առաջարկել, որոնց ուսումնասիրությունը կարող է նաև օգտակար լինել Հայաստանի՝ հանրային միջոցներից ֆինանսավորվող լրատվամիջոցների համար: Այս համատեքստում անհրաժեշտություն է ոչ այնքան ՀՀ վարչապետի աշխատակազմին կից գործող ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գործող InfoCheck.am-ի փաստերի ստուգումը, որքան հանրային ֆինանսավորում ստացող հայաստանյան ԶԼՄ-ների կողմից այդ ամենի անաչառ ու ժամանակին իրականացումը: Պետությունը պետք է պատվիրակի այդպիսի գործառույթներ Հանրային հեռուստաընկերությանը, Հանրային ռադիոընկերությանը, տպագիր և առցանց լրատվամիջոցներին, Արմենպրես լրատվական գործակալությանը, քանի որ վերջիններս մեծապես ֆինանսավորում են հանրային միջոցներից: Միևնույն ժամանակ պետք է հստակ մեխանիզմներ սահմանվեն, որպեսզի այդ ֆինանսավորման քողի ներքո իշխանությունները չկարողանան ազդել անաչառ լրատվության և հանրային հեռարձակողների, լրատվամիջոցների խմբագրական քաղաքականությանը:

● Բարձրացնել հանրության դիմակայությունը՝ մեդիագրագիտության միջոցով

Անհրաժեշտ է մեդիագրագիտության ուսուցումը դարձնել հանրակրթական դպրոցների և բուհական ուսումնական ծրագրերի պարտադիր բաղադրիչ: Հատկապես խոցելի խմբերի՝ այդ թվում՝ տարեցների համար, մեդիագրագիտությունը պետք է առաջնահերթություն համարվի նաև կառավարության, քաղաքացիական

հասարակության, տեղական և միջազգային դոնորների համար: Գրադարանները, մշակութային կենտրոնները և այլ հանրային հաստատություններ կարող են օգնել մեդիակրթությունը լայնորեն հասանելի դարձնել:

Փաստեր ստուգող խմբագրությունները կարող են նաև դառնալ կրթական կարգավորման մի մաս՝ իրենց տեխնիկական հմտությունները կիսելով, հաշվետվողականություն մոդելավորելով և կեղծիքները վիճարկելու գործով:

● Քաղհասարակության կազմակերպությունների, ակտիվիստների և մարդու իրավունքների պաշտպանների պաշտպանություն

Վերջին տարիներին ապատեղեկատվության տարածման արշավների հիմնական թիրախներից մեկը քաղաքացիական հասարակության կազմակերպություններն են, որոնք ունեն մարդու իրավունքների կամ ժողովրդավարության աշխատանքային ուղղվածություն: Մասնավորապես՝ ծայրահեղ պահպանողական քաղաքացիական և քաղաքական խմբերի կողմից այսպիսի արշավներ են կիրառվել քաղաքացիական հասարակության մասին վախի մթնոլորտ ստեղծող և բացառող պատմույթներով հանրությանը սնելու համար:

Իշխանությունները պետք է ապահովեն ակտիվիստների և կազմակերպությունների անվտանգությունը, ինչպես նաև պաշտպանեն առանց միջամտության գործելու նրանց կարողությունը: Այն միջավայրը, որում քաղաքացիական հասարակությունը կարող է ծաղկել ու զարգանալ, կենսական է Հայաստանի ապագայի համար: Բացի այդ, քաղհասարակության կազմակերպությունները ապատեղեկատվության դեմ պայքարի, երկխոսության և ներառականության խթանման և քաղաքացիներին իրենց պետության հետ կապելու ջանքերում հիմնական դաշնակիցն են:

Պետական պաշտոնյաները պետք է ապահովեն վերահսկող մարմինների գործունեությունը՝ նրանց ներգրավելով ապատեղեկատվությանը հակազդելու ջանքերում:

● Վերականգնել հասարակության վստահությունը ԶԼՄ-ների և պետական մարմինների տրամադրած տեղեկատվության նկատմամբ

Ապատեղեկատվության ամենամեծ վնասը կրում են քաղաքացիները. ԶԼՄ-ների և պետության հանդեպ վստահությունը վերջին տարիներին խարխլվել է, քանի որ ապակողմնորոշիչ պատմույթների մի խումբ նպատակ ունի քայքայելու պետական մարմինների, գործընթացների և առաջարկությունների օրինականությունը հասարակության աչքում: Պետական մարմինների աղքատիկ հաղորդակցությունը կարևոր հարցերի շուրջ, հատկապես՝ պատերազմի և կորոնավիրուսային համավարակի մասին արագացրեց վստահության անկումը:

Պետական հաստատությունների նկատմամբ վստահության վերականգնումը և ամրապնդումը Հայաստանի կառավարության համար պետք է լինի առաջնային, գերակա խնդիր, երկարաժամկետ գործընթաց, որը կնպաստի երկրի հաջողությանը՝

ապատեղեկատվության և ժողովրդավարության խաչմերուկից այն կողմ ավելի լայն առաջընթաց ապահովելու գործում:

● Որդեգրել տեղեկատվական անվտանգության ռազմավարական մոտեցում

Հնարավորինս պետք է ամրապնդել պետական հաղորդակցության ռազմավարությունը, քանի որ պետական պաշտոնյաների և կառույցների կողմից թույլ հաղորդակցությունը սրել է ապատեղեկատվության հանդեպ հասարակության խոցելիությունը՝ հաճախ թողնելով տեղեկատվական վակուումներ, որոնք առաջին հերթին լրացվում են ապատեղեկատվությամբ և կեղծ լուրերով:

Իշխանությունները պետք է հստակ սահմանեն այն ռազմավարությունները, որոնցով առաջնորդվում են հասարակության, լրատվամիջոցների, անկախ վերահսկող մարմինների և քաղաքացիական հասարակության հետ հաղորդակցվելիս: Սա ներառում է այն արժեքների վերագնահատում, որոնք առաջնորդում են պետական հաղորդակցությունը, գործադիր և օրենսդիր մարմինների հաղորդակցությունները տարբերակող գործընթացների և դրանց մեջ առկա հավասարակշռության գնահատում, կենտրոնացում ճշգրտության, արդիականության և թափանցիկության վրա: Մասնավորապես՝ զգայուն, հակասական կամ հրատապ հարցերի վերաբերյալ նախաձեռնողական հաղորդակցությունը կարող է կանխել կեղծ լուրերի տարածումն ու արմատավորումը:

● Ստեղծել օրենսդրական փաթեթների մշակման համապարփակ ռազմավարություն

Ապատեղեկատվությունը, կեղծ լուրերը և դրանց հետ կապված տեղեկատվական խնդիրները աներևակայելի բարդ են և չեն կարող լուծվել հատուկ վարքագիծը թիրախավորող սովորական միջոցներով: Ավելին՝ պետական պաշտոնյաների համար կարևոր է ապատեղեկատվությունը հասկանալ որպես հստակ երևույթ, և ոչ թե դրանք հավասարեցնել ատելության խոսքին կամ զրպարտությանը:

Օրենսդրության համապարփակ ռազմավարություն տեղեկատվական տարածքում ստեղծելու գործընթացում պետք է ներգրավել կարևոր շահագրգիռ կողմերի (գործադիր և օրենսդիր, վերահսկիչ մարմիններ, լրատվամիջոցներ և քաղհասարակություն) և ձգտել հավասարակշռել ազատ արտահայտվելու իրավունքը և քաղաքացիներին և ժողովրդավարական ինստիտուտներն ապատեղեկատվությունից պաշտպանելու անհրաժեշտությունը: Հայաստանը աշխարհում միակը չէ այս խնդրին դիմակայելու հարցում, և քաղաքականություն մշակողները կարող են ուսումնասիրել լավագույն փորձն ամբողջ աշխարհում՝ գտնելու Հայաստանի եզակի խոցելի կողմերին համապատասխան մոդել: Կառավարությունը պետք է զերծ մնա ապատեղեկատվության և կեղծ լուրերի խնդրի կոշտ միջամտությունից, ինչպես նաեւ խիստ սահմանափակող իրավական ակտերի ընդունումից, որոնք կարող են հանգեցնել ազատ արտահայտման իրավունքի անհամաչափ սամանափակման:

- **Ապահովել մեդիաների իրական շահառուների թանփանցիկության ապահովման իրավական կարգավորումների պատշաճ կատարումը**

Թեև ընդունվել է իրական շահառուների թափանցիկության ապահովման օրենսդրական փաթեթը, սակայն պարկտիկայում դեռևս խնդրահարույց է դրա իրականացումը: Անհրաժեշտ է ապահովել իրական շահառուների հայտարարագրման պատշաճ գործընթացը: Անհրաժեշտ է աջակցել մեդիաներին այս պարտավորության կատարման գործում, տվյալների մուտքագրումը բաց հանրային ռեգիստրում և հրապարակայնացումը: Մյուս կողմից պետք է խրախուսել մեդիաներին ակտիվ դեր ստանձնել հանրային ռեգիստրում առկա տվալների օգտագործման և հրապարակված տվյալների ճշգրտության նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնելու գործում:

- **Ապահովել տեղեկատվության ազատությունը հարցումների հիման վրա և պրոակտիվ հրապարակայնությունը**

Վերջապես, ապատեղեկատվության դեմ պայքարի համատեքստում առաջնային է տեղեկատվության ազատութչան նշանակությունը: ԶԼՄ ներկայացուցչիների հարցումներին պատշաճ ընթացք տալը, ինչպես նաև պետական մարմինների կողմից պրոակտիվ հրապարակայնության ապահովումը կարող են բեկում մտցնել կեղծ լուրերի դեմ պայքարում: Պետական մարմինները պարտավոր են ԶԼՄ-ներին տրամադրել իրենց տնօրինության տակ գտնվող և հանրային հետաքրքրություն ներկայացնող լիարժեք, ամբողջական և ժամանակին տեղեկատվություն: Հանրային իշխանության մարմինները պետք է տրամադրեն իրենց տնօրինության տակ գտնվող տեղեկատվությունը ողջ ծավալով: Նրանք պետք է լիարժեք պատասխան տրամադրեն լրագրողների բոլոր հարցումներին, բացառեն ուշացումները: Լրատվամիջոցների որևէ հարցում անպատասխան չպետք է մնա, իսկ թերի պատասխանները պետք է բացառվեն: Մյուս կողմից, տեղեկատվության տրամադրման պրոակտիվ մեխանիզմները պետք է պատշաճ օգտագործվեն տեղեկատվությունը ժամանակին և լիարժեք հանրությանը հասցնելու նպատակով՝ այսպիսով կանխելով տեղեկատվական վակուումի առաջացումը հանրային կարևորության թեմաներով: